


Упаковка
для хранения документов
1915г

891.99-82
4-99



3-195a

89199-82

4-99

-6 NOV 2011

Վ Ր Ձ Ի Ն

ԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Ա. ԳՐԲՅԿ

ԿԱԶՄԵՑ

Խ. ՏԻՐԱՑՈՒՆԵՆ

1418

ԳՐԲՈՅԿԻՑ ԳՈՅՍՑԱԾ ԶՈՒՏ ԱՐԴԻԻՆՔԻ
50%-Ը ՅԱՏԿԱՅԻՈՒՄ Է ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐ-
ՆԵՐԻ ՕԳՏԻՆ:



1105 VON 2
12 SEP 2013

12.649

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ



39966-63

ԱՆՐԱԽՅ ԱՆՏՈՆԸ.

Տաք վիճաբանութիւն էր:

Վիճաբանում էին մի խումբ շամախեցի ինտելլիգենտ երիտասարդներ, որ ամրան շոգերին, իբր ամառանոց, հայրենիք էին եկել:

Վիճաբանութեան առարկան այն էր, թէ արդեօք անբախտութիւն ասածդ գոյութիւն ունի՞, թէ ոչ:

— Չունի. վճռարար ասաց կենսուրախ Գարօն:

— Ունի. աւելի ևս վճռարար կանչեց գրաշար Միքայէլը.— իսկ եթէ չունի, ինչո՞ւ ամենահասարակ աչքացաւից իմ այս աչքիս լոյսը պիտի թափուէր և ինձ այս օրին գցէր: Եւ ո՞վ կարող է ասել, որ սա նորից իմ առաջուայ այն աչքս կդառնայ, որ մի վերստից ճուտերի մէջ որոշում էր որն է աքլոր, որը հաւ լինելու:

— Իմ կարծիքով գրաշար պարոն Միքայէլ Ազնաւորեանցը ճշմարիտ է ասում,— ասաց Սերոբ վարժապետը,— այսուհետեւ, ի հարկէ, ոչ մի հրաշքով նրա կուրացած աչքը չի առողջանալու:

— Բայց այդ բանի համար նա իրան իզուր է անբախտ համարում,— ասաց տիրացու Ջարամբին,— որովհետեւ գուցէ այդ աչքը նրան գայթակղեցնում էր, իսկ սուրբ գիրքը,— ինչպէս ձեզ էլ յայտնի է,— ասում է՝ աւելի լաւ է մի աչքդ կոյր լինի, քան թէ նրա պատճառով հոգիդ գեհնն գնայ:

— Գիտե՞ս ինչ կայ, պարոն Ջարամբի, թող իմ աչքս երբեք չկուրանար, իսկ հոգիս, գեհնն չէ որ, թէկուզ մի փոքր էլ այն կողմ գնար:

— Բայց մեզնից որի՞ աչքը չի գայթակղեցնում մեզ.— ծաղրելով տիրացու Ջարամբիին, ասաց Սերոբը,— ուրեմն ինչո՞ւ միայն նրա աչքը պիտի կուրանար:

— Իսկ եթէ պարոն Ազնաւորեանը սիրահարուէր մի գեղեցկուհու հետ և ինքն էլ փոխադարձաբար նրանից սիրուելուս լինէր, տեսնենք նա իրան անբախտ կհամարէր, հարցրեց Գարօն:

— Այն քննչ յիմար գեղեցկուհի պիտի լինէր, որ ելնէր ու ինձ նման մի աչքը կոյրին սիրէր:

— Գեղեցկուհիները միշտ յիմար են լինում,—նկատեց Սեդրը, որ իրան համարում էր կանանց հոգեբանութիւնը լաւ ուսումնասիրած.—շատ անգամ նրանք իրանց շատ էժան են գնահատում:

— Մի գեղեցկուհի այնքան արժէ, որքանով նա իրան ծախում է,—ասաց Գարօն:

— Կարող էր պատահել, որ Ազնաւորեանը փրկած լինէր մի գեղեցկուհու եղբոր կեանքը և իբր վարձատրութիւն, գեղեցկուհին տար նրան իր սէրը:

— Աւելի շուտ նա ինձ կտար հոտած ծաղիկների մի փունջ, հետն էլ մի համբոյր ոչ թէ պոռոչներէս, այլ այս կանգազիս:—Այդ ասելով գրաշարը ցոյց տուեց իր ճաղատ գլուխը:

Վիճաբանողները բըքշացին:

— Պարոնայք,—խօսք վերցնելով, սկսեց ուսանող Սեդրակը,—մենք հարցից շատ հեռու գնացինք, կամ աւելի լաւ է ասել, բոլորովին շեղուցիկնք և ընկանք մի այլ փիլիսոփայութեան մէջ: Հարցը շատ պարզ է. մենք ասում ենք՝ անբախտութիւն ասածդ գոյութիւն ունի՞ր թէ ոչ: Ես այդ հարցին պատասխանում եմ այսպէս.—քանի որ իրականութիւնը ցոյց է տալիս, որ շատ անգամ բախտաւորութեանը հետևում է անբախտութիւն, ինչպէս և անբախտութեանը բախտաւորութիւն, հետևապէս թէ մէկը և թէ միւսը գոյութիւն չունեն...

— Ընդհառակը,—Սեդրակի խօսքը կտրելով, ասաց գաւառական թղթակից Սմբատը,—եթէ կեանքի փորձը ցոյց է տալիս, որ շատ անգամ նրանք փոխարինում են իրար, ուրեմն պէտք է ասել նրանք գոյութիւն ունեն և ոչ թէ չունեն:

— Ճիշտ է, ճիշտ է, կանչեցին ժողովականները միաբերան:

— Սպասեցէք, ասաց Սեդրակը,—տիրեց լուսթիւն. նա շարունակեց:—Ես ասում եմ, որ մենք ճակատագրի, կամ մարդու բախտաւորութեան և կամ անբախտութեան մասին վկայում ենք այն ժամանակ, երբ արդէն նա տեղի է ունեցել. իսկ մինչ այն՝ մեզինչ ոչ ոք չի կարող մարգարէանալ թէ մինչ գերեզման մեզ ինչ է սպասում:

Ամենքը համաձայնուեցին, որ արդարև այդ այդպէս է:

— Ո՛չ, այդպէս չէ. կանչեց մէկը, որ մինչ այժմ լուռ ականջ էր դնում վիճաբանութեան:

Ամենքը լարեցին իրանց ուշադրութիւնը: Առաջ եկաւ մի կաղ, հաստագլուխ և բերնից թուքը ծորացող երիտասարդ:

— Դուք ասումէք, ընդ նորածինը լոյս աշխարհ է գալիս, ոչ ոք մեզինչ չի կարող մարգարէանալ թէ ապագայում նա անբախտ է լինելու, թէ՞ բախտաւոր, և դուք ամենքդ պատասխանում էք այդ հարցին և ասում էք, ոչ: Իսկ ես՝ Անտօն Տընկերիկեանս, ասում եմ,—սխալ էք:

— Բացատրեցէք մեր սխալը, ասացին ժողովականները:

— Աչքիս վրայ, լսեցէք.

Երբ ես ծնուեցի, հայրս, մայրս, բոլոր մեր հարևանները և մինչև անգամ տատմայրս, տէրտէրը և նոյն իսկ ժամհարն էլ ասել են,—այս տղան պէտք է անբախտ լինի: (Այդ բանը ես լսեցի և իմացայ, երբ արդէն մեծացել էի և սեղ սպիտակից կարողանում էի ջոկել): Սրանց մարգարէութիւնը կատարուեց ճշտութեամբ: Եւ ես կարող եմ ասել,—և այդ հաստատապէս,—որ աշխարհիս երեսին ինձ նման մի անբախտ էակ ոչ հղել է, ոչ կայ և ոչ էլ լինելու է:

— Նախ և առաջ դուք մեզ անց ասացէք, թէ ձեր այդ մարգարէաները ինչից իմացան, որ դուք պէտք է անբախտ լինէք:

— Ահա ինչից: Ծնուել եմ ես Յուզայ ուրբաթ գիշերի ճիշտ այն բոպէին, երբ տաճարի մէջ հանգցրել են վերջին մօմը և երբ ամբոխը սուգի մէջ է մտել և լալազին կոչերով արտասուք թափել: Սա մէկ Յետոյ երբ ինձ մկրտել են, անունս դրել են Անտօն: Սա երկու: Այժմ խնդրեմ սրան նայեցէք:

Այդ ասելով երիտասարդ Անտօնը բացեց իր գգեստի կրծքի կոճակները՝ ցոյց տուեց բակլայի մեծութեան մի սև բիծ, որ գինու տկճորի նման կախուած էր նրա պորտի մօտ:

— Եթէ ես բախտաւոր մարդ լինէի,—շարունակեց նա,—ինչո՞ւ անունս Անտօն պիտի դնէին և ինչո՞ւ այս գեղեցիկ բիծը փոխանակ թշիս վրայ, պորտիս մօտ պիտի լինէր բուսած: Ահա, սրանք են իմ ծնուած օրի նշանները: Հիմա լսեցէք կեանքիս մէջ գլխիս եկած այն անբախտութիւնների շարանների մասին, որոնց մասին յիշում եմ, իսկ մտքից ընկածներս ուղղակի թիւ ու համար չունի:

Երիտասարդները հեգնական ջգպտով իրար երեւի նայեցին, նա շարունակեց:

Երբ մեծացայ և արդէն ուսումնարան գնացող երեխայ էի, մի շաբաթ օր, մայրս ձեռքս դուշ տալով և ինձ սալոր խոստանալով, ուղարկեց երկու կոպէկի մածուն գնելու:

Երբ մածունը ձեռքիս տուն էի վերադառնում, գինեվաճառ Կապետը տեսա ինձ և ասաց:—Անտօն, ի՞նչ տամ ծափ տաս: Ես առանց երկար մտածելու ծափ տուի, իսկ գուշս վայր ընկաւ կոտորուեց, մածունս էլ թափուեց...

Տուն վերադարձայ և սալորի փոխանակ կերայ մի անլ թթու բան:



Եօթ, թէ ութ տարեկան էի:

Ամառային մի օր առանց վարդիկի փողոց էի դուրս եկել խաղալու: Այդ ժամանակ հայրս հարևան Թորոս-ապերի հետ խօսակցելով՝ վերադառնում էին շուկայից տուն:

Հայրս նկատելով, որ ես առանց փոխանի եմ, սկսեց յանդիմանել ինձ: Իսկ Թորոս-ապերը, ընդհակառակը, նրան արգելելով ասաց:—Մի կպչիլ երեխայի սրտին. օրհնեալ լինի նրա անմեղութիւնը. թող վազվառի:

Այդ բանը ես մաքուս պահեցի: Չորս, հինգ տարի յետոյ, երբ Թորոս-ապերը մի օր օտարութիւնից վերադարձել էր, որպէսզի նորից նրա գովասանքը լսեմ, ես վարդիկս հանեցի և վազեցի նրանց բակ նրա գալուստը շնորհաւորելու: Սակայն անպիտան Թորոս-ապերը բռնեց ինձ և անխնայօրէն հտակա մտրակելով և մի քանի յիշոցներ էլ գլխիս թափելով փողոց քշեց և այնտեղ մի բանի անցուղարձ անողներին առաջ խայտառակեց:



Մեր հարևան քարհան Կարանինց նուազ հասած ժամանակն էր: Ընկերներս հաւաքուած վճռեցինք մի լաւ յարձակում գործել և նուազողանալ:

Վերցնելով մի սանդուխք, մենք մօտեցանք նրանց տան պատին: Պայմանաւորուեցինք, որ մէկներս բարձրանայ կտուր և նայէ, եթէ բակում մարդ չկայ, հազարով նշան տայ, որ մտացածներս էլ բարձրանանք վեր և այնտեղից նուազ փետինք:

— Դէ, ո՞վ է ամենից քաջը, որ բարձրանայ,—հարցրին ընկերներս:—Ե՛ս,—ասացի ես և բարձրացայ վեր: Բակում ոչ ոք չկար: Ես սկսեցի բարձր-բարձր հազհազել: Որտեղից որ էր, յանկարծ բակի մէջտեղ վազեց Կարան-ապերը մի մեծ մահակ ձեռքին: Տեսնելով վտանգը, ես վազեցի դէպի սանդուխք... Սակայն ընկերներս սանդուխքը փախցրել էին, հեռուս կանգնել և հըռհըռ քրքրում:

Աւելորդ է ասել, թէ նաան տեղ ինչ ուտեցրեց ինձ Կարան-ապերը:



Երիտասարդ վաճառական Երեմը տօնավաճառից նոր էր վերադարձել:

Մի օր ընկերներս հետ փողոցում կանգնած, յանկարծ տեսանք, որ պարոն Երեմը արագ-արագ դէպի մեզ է գալիս: Ես ընկերներս առաջ պարծեցայ նրա հետ ծանօթութեամբ և որպէսզի այդ բանը գործով ապացուցանեմ, ելայ նրան դիմաւորելու: Երբ Երեմը մօտեցաւ ինձ, հարցրեց:

— Գալուստը դ՞՞ռ ես:

— Հրամաններս պարոն Երեմեայ, ստելով ասացի ես, կարծելով մի քաղցր խօսք պիտ լսեմ նրա բերնից:

Յանկարծ նա իմ բերնիս մի այնպիսի բռունցք զարկեց, որ երկու ատամներս ընկան. յետոյ փորիս քայի տալով ասաց:—Մէկ էլ դու իմ որդուս եթէ ձեռք տաս, ես քեզ ցոյց կտամ, թէ ով է Երեմը և ով ես դու, նրա որդուն ծեծող Գալուստը:

Իհարկէ արդէն ուշ էր ասել նրան, որ Գալուստը ես չէի:



Մի Ջատիկ օր տէր Օվանէսը առաւ ինձ իր հետ տնօրհններ ման գալու:

Առաջի տունը, որ մտանք Խուլ-Դաւիթինց տունն էր: Տանտէրը խնդրեց և մենք նստեցինք նախաճաշի: Տանտիկինը մի թերխաշ ձու կոտրելով ուզում էր ուտեցնել երեխաներից մէկին: Երեխան հրաժարում էր ասելով, որ ձուն հոտած է:—Հոտած չէ, որդի, այ կուզես տիրացուին հարցրու. (այսինքն ինձ): Այդ ասելով տանտիկինը ձուն ինձ տուեց և աչքով արաւ, որ ես գովեմ: Ես սկսեցի հոտած ձուն գովաբանել: Տանտիկինը իմ գովաբանութիւնից հիացած, ասաց:—Դէ, որ այդքան հաւանել ես, տիրացու, ինքդ անուշ արա, որդի:

— Անուշ արա, ասաց տէրտէրը,—անուշ արա,—ասաց և տանտէրը: Ի մեծ ուրախութիւն և զուարճութիւն երեխայի, ես ստիպուած եղայ անուշ անել իմ գովաբանած հոտած ձուն...



Ձեզ յայտնի է, որ ես իմ պատանեկութիւնը և երիտասարդութիւնը անցրել եմ օտարութեան մէջ:

Երբ առաջին անգամ ոտքս Շամախիից դուրս դրի, մտածեցի, գուցէ հիմա բախտը սկսի խղճալ ինձ, խղճալ ծնողներին և մի փոքր ժպտալ երեսին:

Բայց ոչ:

Մի օր Բագու պարապետի վրայ պատահեցի մանկութեանս ընկեր Փափուկ-Սէյրանին: Սէյրանը տարաւ ինձ իր մօտ ճաշի:

Նստեցինք սեղան: Ծաղին բերին ինչ որ կարկանդակ: Փափուկը կնոջ ներկայութեամբ հարցրեց ինձ:—Հը՞, Անտուշ, հաւանեցի՞ր: Ես միամտաբար պատասխանեցի, որ կարկանդակը պատրաստած է շատ յիմար կերպով, որ նրա ոչ գոյնն է գոյն, ոչ հոտն է հոտ և երեի պատրաստողը ոչ աշխարհ է տեսել, ոչ բերնի համը պիտէ...

Դեռ խօսքս չվերջացրած, տանտիկինը յանկարծ օտքի կանգնեց, խոնարհ կերպով գլուխ տուեց ինձ, հազար շնորհակալութիւն ասաց, և դեմօնստրատիւ կերպով արագութեամբ դարձաւ Սէյրանին և ասաց,—խօսք չկայ, հիանալի, հրաշալի և երևելի քաղաքավարի հիւր ես բերել... գլխներին:—Այդ ասելով գնաց միւս սինեակ և դուռը հտեից այնպէս շրխկացրեց, որ պատի ծեփն էլ թափուեց: Ես մինչև այսօր էլ դեռ չեմ կարողանում հասկանալ, թէ ինչ պատահեց տիկնոջ: Իսկ Սէյրանը հոհալով ոտքի ելաւ և ճակատս համբուրելով, ասաց.—խելքիդ մատաղ, տղայ:



Ջրօրհններէ ճրագալոյցի երեկոյեան քաղցած փորով կանգնել էի եկեղեցիի դռան:

Ժամերգութիւնը վերջացաւ, մարդիկ ցրուեցին: Այդ ժամանակ մի անծանօթ մարդ մօտեցաւ ինձ և հարցրեց՝—ճվ էք: Ես ասացի,—օտարական: Անծանօթը տարաւ ինձ իր տուն:

Առաջին բանը, որ ես նկատեցի, այդ այն էր, որ տանտիկնոջ ոտքը կաղ էր: Յետոյ նկատեցի, որ անձոռնի ձայն ունէր, իսկ ընթրիքի ժամանակ նկատեցի, որ քիթն էլ ծուռ էր:

Դեռ բերաններին բան չէրած, քաղաքավարի երեւուլու համար ես ուզեցի մի բան խօսել.—պարոն,—ասացի ես,—դուք այդքան հարուստ մարդ, ի՞նչպէս է պատահել, որ գլխներիցդ մի գեղեցկուհին կտրուած այս չըխկըլիին էք գտել: (Շամախեցիներին լեզուս կաղութիւնը ծաղրող բառ է): Տանտէրը համեստութեամբ պատասխանեց,

որ իր կնոջը այս անբախտութիւնը մօրից չէ պատահել այլ յետոյ: Այդ ասելով նա մի անձեռոցիկ անցրեց օձիկիցս, որպէսզի շորս չկեղտոտուի: Լաւ, ասացի ես.—կաղութիւնը թողնենք մի կողմ, իսկ ի՞նչ կասէք սրա ձայնին, որ կատուի ձայնի է նման: Տանտէրը ասաց եթէ ես լսեմ նրան իր աղանջով, այդ ձայնը ինձ շատ անոյշ կը թուայ...

— Հապա սրա քիթն ի՞նչ կասէք, հարցրի ես. չէ՞ որ նրան ուզելու դուք աչք ունէիք և տեսնում էիք, որ նա ծուռ է: Այդ բոլորը ես ասում էի, որ նրանց դուարձացնեմ: Յանկարծ տանտէրը նայեց աչքերիս, ճակատիս, յետոյ հնչեցրեց զանգակը: Ներս մտաւ նափշտուր:—Սօնա, ասաց նա,—շուտ դռնապանին այստեղ կանչիր: Սօնան գնաց. մենք ելանք օտքի:

Ներս մտաւ մի վայրենի լեռնական հայ:—Մանգասար,—հրամայեց տանտէրը,—խնդրեմ իսկոյն ճանապարհ գցես այս ամե-նա-քաղա-քա-վարի՛ երիտասարդին:

Ես ապշեցի տանտիրոջ անքաղաքավարի վարմունքից և առանց սպասելու, որ Մանգասարը ուսերս ձմրոտէր, շտապով անձեռոցիկը օձիկիցս հանելով, նոյն քաղցած փորով դուրս վազեցի այդ անհիւրընկալ տնից...



Դուք հիմա կասէք, սրա իր ոտքն էլ կաղ է, ինչո՞ւ է ուրիշներինը ծաղրում: Պատմեմ, թէ իմը ինչպէս պատահեց:

Ողորմած հոգի հայրս պատմել էր ինձ, որ եթէ մարդ խրտնած ձիւ առաջը դուրս գայ և յանկարծ կտրելով նրա առաջը բարձր ձայնով կանչի—կաց, ձին իսկոյն վախեցած կբեռուի տեղում և կանգ կառնի:

Մի անգամ պարապետի մէջտեղով մի կատաղած ձի էր վազում. ամենքը փախչոտում էին: Յանկարծ յիշելով հօրս խօսքը, վազեցի ձիւ առաջը կտրելու:—կաց, կանչեցի ես:

Անիրաւի ապրանքը փոխանակ կանգ առնելու, կրծքով խփեց ինձ և վայր գլորելով ոտքս կոխեց կոտրեց ու ինքը փախաւ:



Չկամենալով ինձ պատահած ուրիշ անհամար դժբախտութիւնների մասին ձեր գլուխը տանել, կասեմ միայն այն, որ մի օր, որ-

պէսզի նրանց վերջ դրած լինեմ, չար միտք յղացայ—ծովը գցել ինձ
և խեղդել:

Այդպէս էլ արի:

Մի երևելի, տաք օր, գնացի ծովափ, շորերս հանեցի դրի այն-
տեղ և մտայ ջրի մէջ, սակայն որովհետև ջուրը այդտեղ շատ ծան-
ծաղ էր, հլայ, գնացի լողաբանի կամրջից խոր տեղ ընկնելու: Կ-
մուրջի ծայրին կապած էր մի մակոյկ, ես բռնեցի պարանը և մտեց-
նելով նստեցի մակոյկի մէջ, սկսեցի մտածել.—ինչո՞ւ եմ այդքան
անբախտ: Արևի ախորժալի տաքութիւնից և մակոյկի օրօրուելուց ես
քուն մտայ: Շատ մնացի այդ անոյշ քնի մէջ թէ քիչ—չգիտեմ. բայց
երբ զարթնեցի, վճռեցի՝ չէ, անձնասպանութիւնը իմ ուխտի բանը չի:
Այդպէս մտածելով պարանը քաշեցի, հասայ կամուրջ և դուրս գալով
գնացի հագնուելու... սակայն շորերս իր տեղում չգտայ... մի քանի
բարի մարդիկ վրաս ձգեցին ածուխի տոպրակից պոկած մի կտոր
խսիր... և ձամբեցին տուն:

Միւս օր տեղական լրագրում տպած էր այսպիսի մի լուր:

«Երեկ ծովափում գտնուել է մի ձեռք զգեստ, որի միջից հա-
նուած է մի թղթի կտոր, վրան գրած,—իմ մահուանս մասին ոչ ոքի
չմեղադրել, Անտօն Տընկըրիկեան»:



— Դէ, ես վերջացրի—ասաց Անտօնը և դարձաւ գրաշարին.—
հիմա դուք ինձ ասացէք, որտե՞ղ մնաց ձեր անբախտ լինելը իմինի հետ
համեմատած:—Պարոնայք, դառնալով ժողովականներին հարցրեց նա.
—այդ բոլոր իմ գլխով անցածը այն չէ՞ ապացուցանում, որ ես, Ան-
տօն Տընկըրիկեանս, արդարև մօրից անբախտ եմ ծնուել:

Այժմ մնում էր նրան լսել ժողովի եզրակացութիւնը:

Ժողովը խնդրեց, որ մի բոպէ նա հեռանայ մի կողմ:

Հազիւ Անտօնը հեռացած, ձայն տուեց Գարօն:

— Պարոններ, իմ կարծիքով նա մօրից ոչ թէ անբախտ, այլ
յիմար է ծնուած:

— Այո, այդ ճիշտ է. բայց չէ՞ որ մօրից յիմար ծնուած լինելն
էլ մի մեծ անբախտութիւն է, ասաց Սեդրակը:

— Սպասեցէք, ասաց Սմբատը, գուցէ մինչ մահը դեռ նրան մի
մեծ բախտաւորութիւն է սպասում... ուրիմն պէտք է ասել, որ մար-
դու բախտաւոր կամ անբախտ լինելու մասին կարելի է հաստատ
կարծիք յայտնել միայն նրա մահից յետոյ:

Ժողովը շատ երկարեց և ոչ մի հաստատ տեօրիայի չհանգաւ:
Յամենայն դէպս Անտօնի վերաբերմամբ նա դուրս բերեց հետեւեալ
վճիռը:

«Ժողովը յայտարարում է, որ Անտօն Տընկըրիկեանը մօրից ան-
բախտ է ծնուել և այդ մասին նրա ծնողների, տատմայրի, տէրտէրի
և ժամհարի մարգարէութիւնը սխալ չէ»:

Անտօնը գոհ մնալով, յաղթական կերպով ժպտաց: Խեղճ տղայ:
Իր կեանքում այսպիսի բախտաւոր օր չէր տեսել նա:

Ալէքսանդր Աբէլեան

Նոր-Նախիջևան.

Պ Օ Է Ց Ի Ն.

Հերոսներին նւիրեցէք ձեր քնարը ոսկելար.
 Բնւ է երգէք սէր ու սոխակ պարտէզներում մշտդալար.
 Արնակոլոլ հայրենիքիս աղերսանքը կցկտուր
 Չարձագանքե՞ց ձեր սրտերում, հէգ մենութեան անձնատուր:

Հերոսներին նւիրեցէք ձեր ժպիտը սիրակէզ՝
 Բնւ է երգէք արցունք, թախիծ, անապատներ արեկէզ...
 Արեան ծովում լող է տալիս հայրենիքս սրգաւոր—
 Չմւր են բաղխում ալիքները ձեր խցերին մենաւոր:

Հերոսներին նւիրեցէք ձեր յանգերը հըրավառ.
 Օրհներգեցէք հայրենիքիս արշալոյսը հրաշափառ.
 Օրհասական անեղ կուին դուք էլ եղէք մասնակից,
 Մի հեռանաք, երգասուններ, հերոսների բանակից:

Ս. Շէյխ.

Սիմ. Համալեան

ԼՈՒՅՑ ՄԵՂԵՂԻՆ

...Լուսց մեղեղին
 Գիշերի գրկում...
 Հառաչեց ուռին
 Տխուր ու տրտում...
 Սար ու ձոր նրան
 Արձագանք տըւին,
 Զով, հով միաձայն
 Վհւշ-վհւշ սըգացին...

Առուն տրտմագին
 Շշնջաց մեղմիկ.
 —Մի լար, իմ անպին,
 Ուռի գեղեցիկ...

Լացով չի բուժւի
 Սիրոյ վէրքը խոր.
 Լնւ կաց, իմ ուռի՝
 Ընկեր դարաւոր...

Լուսց մեղեղին
 Գիշերի գրկում...
 Հառաչեց ուռին՝
 Տխուր ու տրտում...

Վարսենիկ Աղասեան

Թիֆլիս.

«ՊԱՏԵՐԱԶԱՆ ԹԱՐՔԻՑ»

Յառաջ

Ինչքան մուրճեր, ծանրը մուրճեր հարւածեցին մեզ անգո՛ւթ,
Ինչքան կեանքի դժւար ճամբին տեսանք մրրիկ ու կարկուտ,
Քանի՛ անգամ դատարկեցինք մենք բաժակներ դառնալի,
Քանի՛ անգամ մեր առաջին մահը կանգնեց սպառնալի:

Մենք տոկացինք. ամեն փորձանք տարաւ հերոս մեր ոգին.
Յոյսն անսասան՝ մեր սրտի մէջ՝ մենք սիրեցինք կաթոգին.
Եւ երբ այսօր ժամը խփեց, հրը վեր կացանք հոծ ու խրոխտ,
Մի պահ անգամ չըվհատուենք. յառանջ գնանք անյողդողդ:

Բոլոր ոյժով մեր վեհագոյն իդէալին միշտ ձգտենք.
Ազատութեան ճանապարհին սիրենք պայքար, սուր ու զէնք:
Միշտ նոր ոյժով, նոր կորովով, նոր զոհերով անհառաջ,
Մեր եզակի պայծառ ճամբով գընանք յառանջ ու յառանջ...

Միմ, Բարիեան

Եալտա

ԱԻՍՂ, ՈՒՑ ԷՐ...

(պատկեր)

Երեկոյեան դրօսանքից նոր էի տուն հկել, նոր էի գիրքս ձեռքս
առել, որ կիսատ թողած ընթերցանութիւնս շարունակեմ՝ երբ հնչեց
դռան դանդակը: Իսկոյն գիրքս մի կողմ թողի, վեր կացայ և շտա-
պով դուռը բաց արի:

Եւ ի՜նչ.— առաջս կանգնած էր վաղեմի ընկերս, սիրած ու պաշ-
տած ընկերս, որին քանի՛ տարիներ, դպրոցը աւարտելուց յետոյ, չէի
տեսել:

Յիշում եմ, թէ ինչպէս նա միակն էր մեր մէջ իր առողջ կազ-
մուածքով, կայտառ, խիզախ բնաւորութեամբ ու երեսի մշտական
կարմիր գոյնով: Մեր աշակերտական կեանքը, կարելի է ասել, նա
էր բաղցրացնողը...

Նա այժմ կանգնած էր առաջիս. ո՛չ, չէր կանգնած, այլ յենուած
դռան ու շէմքի անկիւնին՝ անկենդան հայեացքով նայում էր աչքե-
րիս...

Բայց որքան փոփոխութիւն. կարմիր թշերը, որոնց այնքան նա-
խանձում էինք մենք՝ այժմ թոյնիլ, դեղնիլ ու ծածկուել էին խիտ
մազերով. այտերը երկու կողմից դուրս էին ցցուել, կարծես պատուուե-
լով կաշուի տակից դուրս պիտի ընկնէին: Շորերը անկարգ, կեղտոտ...

Ես մի րոպէ սառած մնացել էի. տեսարանի անսպասելիութիւնը
կաշկանդել էր թէ լեզուս և թէ ոտքերս:

Չգիտեմ, որքան ժամանակ կարող էի այդ դրութեան մէջ մնալ՝
եթէ նա մի խղճուկ, բռնազրօսիկ ժպիտ խաղացնելով շրթունքների
վրայ՝ մեղմիւ չասէր՝—բարև՛, Սուրէն:

Այն ժամանակ միայն ես, կարծիս բնազդմամբ, երկարացրի ձեռ-
ներս, որ փաթաթուեմ նրան, բայց հէնց այդ րոպէին նա ոտքերիս
տակ գտնուեց... նա էլ իւր կողմից փորձ էր արել փաթաթուել ինձ.
Բայց հաւասարակշռութիւնը չկարողանալով պահպանել՝ վայր էր գլու-
րուել:

Մորմոքը զարկեց սրտիս. իսկոյն կուացայ՝ առի նրան բազուկ-
ներիս մէջ ու տարայ ներս:

Նա ուշաթափուել էր. դրի մահճակալիս վրան, կրճքի կոճակները
քակելով՝ սկսեցի երեսին ջուր սրսկել... նա կամաց-կամաց սկսեց
ուշքի գալ...

— Սուրէն—հնչեց յանկարծ նրա խուլ, գողացող ձայնը: Նա բաց

էր արել աչքերը և անթարթ հայեացքով նայում էր երեսին լճու, անձամբն: Եւ... յանկարծ սկսեց հեկեկալ՝ դանն, խղճալի... Յուզուած բռնեցի նրա գլուխը և սեղմեցի կրծքիս...

Անցաւ մի քանի ծանր, սրտամաշ րոպէներ: Հեկեկանքը վերջապէս դադարեց: Մտածում էի՝ անշուշտ մի քար էր դրուած նրա սրտի վրայ, որ ճնշում էր նրան. լացը կարող էր քիչ թեթեւացնել... և ահա նրա թոյլ բազուկները փարուեցին վզովս... մի քանի րոպէ գրկախառնուած մնացինք: Առաջինը ես յետ արի ձեռներս և յուզուած ձայնով հարցրի.

— Վարդան, դու մի ծանր վիշտ ունես սրտումդ, որ քեզ ուտում է...

Նա արտասուալից աչքերը յառեց վրաս...

— Այո, Սուրէն, սիրտս քամուած է, կեանքս էլ հետը... և լռեց: Ես չստիպեցի շարունակել, զգում էի, որ պատմելու էր. պէտք էր հօ քիչ թեթեւացնել ցաւը:

— Սուրէն, քեզ էլ կեանքը այսպէս հետևում է,— շարունակեց նա ձայնը մի քիչ ուժեղացնելով և պատասխանի չսպասելով՝ շարունակեց.

— Ես խռովել եմ կեանքից, նա էլ ինձանից. մենք միմեանց հալածում ենք... Թէ մեզանից որն է յաղթելու—չըզխտեմ... յիշում ես այն ոսկի ժամանակները, երբ մարդկային ոչ մի հոգս չէր կարող ներմուծել մեր կայտառ, ուրախ սրտերը, յիշում ես, ինչպէս երկսով խօսում էինք մեր ապագայ կեանքի մասին, հեռանկարներ կազմում և խորհրդակցում՝ թէ արդեօք ի՞նչ էր սպասում մեզ դպրոցի պատերից դուրս-կեանքի ժխտի մէջ—գոյութեան կուում... Նա չկարողացաւ վերջացնել իւր խօսքը. սկսեց հազալ սրտի խորքից՝ չոր, խեղդուկ հազով...

Եւ առաջին անգամ իմ քեթին կպաւ նրա բերանից փչող արաղի սոսկալի բուրմունքը...

Ես յետ քաշուեցի, Ընկերս նկատեցայ դ. շրթունքները շարժուեցին, ուզում էր խօսել—չխօսեց. միայն լուռ հայեացք ձգեց վրաս... Ես անզգոյշ վարմունքովս վերաւորած զգալով ընկերոջս՝ երեսս նորից մօտեցրի նրան. այս անգամ աւելի մօտիկ, քան առաջ...

Նա նոյն լուռութեամբ գլուխը հեռացրեց ինձանից և կիսահեգնական տոնով ասաց.

— Սիրելիս.— քեզ հետ կեանքը դեռ հաշտ է. նայիր չըփոխուես ինձանից... Ապա աւելացրեց՝

— Դու գիտէիր— ես ինչ էի անում...

— Ո՛չ, Վարդան, քանի տարի կլինի աւարտածներս, բայց քո մասին ոչ մի տեղեկութիւն չունէի:

— Ես ոչինչ չէի անում, իմ կեանքը մինչև այժմ եղել է և կայ մի մութ, անորոշ գառանցանք: Ես ապրել եմ մարմնով, բայց երբեք այդ զգացած չեմ հոգով. մարմինս գարշ բաւականութիւններով յղժփացել է, բայց հոգիս միշտ բողբոջի դերումն է գանուել. և երբեք, երբեք, գոնէ մի օր չի եղել, որ ես ինձնից բաւական լինէի...

Եւ նա սկսեց պատմել իւր կեանքը. ես ամբողջապէս լսողութիւն դարձած ականջ էի դնում նրան:

— Աւարտեցի դպրոցը, — սկսեց նա, — կեանքը ընդունեց ինձ իբրև դոն: Գործի կպայ, ծանօթացայ մարդկանց հետ և նրանցից կազմեցի մեծ շրջան... Առաջին տպաւորութիւնը լաւ էր. և չէ՞ որ հէնց առաջինն էլ, մեծ մասամբ, գերակշռող է լինում բոլոր յետիններից: Ես հաւատացի նրանց և սկսեցի քայլ առ քայլ հետևել նրանց. նրանք ինձ համար կարծես աստուածներ լինէին... Տէր Աստուած, որքան թոյլ եմ եղել ես...

Անցան տարիներ—տարիների յետևից. իմ բնաւորութիւնը փոխուեց. ես այլևս առաջուայ իղէալիստը չէի. անհատականութիւնը մեղացրել էր խիղճս: Ես մեծացել էի, փող ունէի և այն կարծիքին էի, որ ամենքը պարտական էին ինձ հպատակուել: Ես հպարտ էի, որքան կարող էր լինել մի մարդ, որը իւր չորս կողմը ոչ մի պակաս բան չէր տեսնում և չէր զգում ոչ մի կարիք...

Ընկերներս ամեն օր գալիս էին ինձ մօտ... խօսում, ծիծաղում ու լսում էինք... Առաջին ժամանակները այդպէս էր, բայց յետոյ կամաց-կամաց նրանք իրանց գոյնը ցոյց տուին. սկսեցին ինձ հրաւիրել այնպիսի տեղեր, որոնց անունը լսելիս,— յիշում ես, իմ առաջուայ խօսքերս, սոսկում էի:

Այնտեղ նստում, լսում ու զուարճանում էինք... և այդպէս համարեա ամեն գիշեր... Յաճախ էր պատահում, որ գիշերը առանց քնելու էի անցկացնում... Խմելը ինձ համար կամաց-կամաց պահանջ էր դառնում. ես չէի կարողանում մի օր գոնէ զգաստ գրութեան մէջ մնալ: Այսպէս չէի էլ իմացիլ, թէ ինչպէս հօրիցս մնացած ահագին ժառանգութիւնը ձեռքիցս գնում էր. գործս սկսեց կաղալ, որովհետև մտքով գործ անել չէի կարողանում...

Տեսնելով գործիս դրութիւնը կրքոտանիս դատարկուելը՝ «սիրելի ընկերներս» կամաց-կամաց հեռացան ինձանից:

59966-67



Ես ֆնացի մենակ:

Բայց նրանց տուած դասը այնքան էր արմատացիլ իմ մէջ, որ ուղղուել անկարելի էր... Ես մօտենում էի խորխորատին...

Այսպիսով, սիրելիս, մի կողմից խմելս, անցկացրածս անքուն գիշերները, իսկ միւս կողմից էլ խայտառակ ու անժուժկալ կեանքս իրանց գործը տեսան, քայքայեցին ատողջութիւնս ամենասոսկալի կերպով: Տեսնում ես՝ հազը խեղդում է ինձ... (Չմոռանամ ասել, որ ընկերոջս պատմութիւնը յաճախ ընդհատում էր չոր, կտրտող հաղից):— Բայց ես շարունակում էի սովորական կեանքս, առանց նրան, կարծես, չէի կարող ապրել:

Այդ անառակ կեանքս շարունակեցի մինչև այն ժամանակ, հրք հետս պատահեց մի դէպք, որը բացից փակուած աչքերս ու ցոյց տուեց ինձ փրկութեան ճանապարհը.

Բայց, աւանդ, ուշ էր արդէն...

Մի գիշեր, ըստ սովորականի, «զուարճանում» էի խայտառակ շուայտութեան մէջ: Ամեն ինչ տեղն էր. սեղանը խմիչքներով և ուտելիքներով լիքը...

Այդ գիշեր իմ զուարճութեան առարկան-Ֆէաս փոխուած էր. մի սիգարէտ, գեղեցիկ, բայց համեստ ու ամաչկոտ Ֆէաս, որպիսին ես ամբողջ կեանքումս չէի տեսել... նա կարծես այդպիսի տեղերի համար ստեղծուած չէր... Ուշ, շատ ուշ, իմացայ, որ նա ստիպմամբ, հակառակ իւր ցանկութեան էր ընկել այդպիսի անառակ տեղ... Բայց շարունակեմք...—Ես սովորել էի ամենքի հետ էլ միատեսակ վարուել, ամենքին էլ իմ խայտառակ զուարճութիւններին—բմականոյքին ենթարկել՝ ուղեցի դրա հետ էլ նոյնպէս վարուել: Բայց կարող ես երեւակայել, Սուրէն, որ այդ թոյլ արարածը այնպիսի մի ապտակ իջիցրեց երեսին, որ ես գետին գլորուեցի և գող կատուի նման ձեռքս երեսին դրած՝ չէի յանդգնում նրա երեսին նայել... Այդ բոլորին իմ գլխում ամեն ինչ խառնուեց.—ես, անարգուած ու պատժուած մի անյայտ, բայց ազնիւ կնոջից՝ ձգուած էի հիւրանոցի յատակի վրայ... Անգիտակցաբար հարց էի տալիս ինքս ինձ—ի՞նչ է այս, ինչո՞ւ այսպէս արաւ: Եւ, հաւատում ես, ընկեր, այդտեղ, այդ յատակի վրայ ընկած խղճուկ դրութեանս մէջ՝ պաշարեց ինձ մի անծանօթ թմբութիւն... առաջին անգամ մտաբերեցի, որ այս ապտակը ստացայ մի կնոջից, որն ունի պատիւ ու ինքնասիրութիւն... այդ ապտակը ցոյց տուեց ինձ իմ կեանքի ունայնութիւնը ու բարոյապէս ընկնելս... յուզմունքը պատեց սիրտս, աչքերս լցուեցին արտասուքով...

Ես զղում էի...

Չունենրս առաջ տարածեցի, որ ներողութիւն խնդրեմ այդ աղնիւ էակից, բայց... նա անյայտացել էր... Մի ակնթարթում վերթոյ տեղիցս և, հրապարակաւ անպատուած մարդու նման՝ դուրս ընկայ փողոց...

Միւս օրը տեղական թերթերից մէկում կարդացի, թէ ինչպէս մի կին հիւրանոցում, իւր պատիւը պաշտպանելու համար՝ ապտակել էր մէկին և յետոյ թոյն ընդունելով ինքն էլ մեռել: Գրպանից գտել էին մի թղթի կտոր—վրան գրուած՝ «Խնդրեմ ոչ ոքին չմեղադրել անձնասպանութեանս համար. իմ նախկին քայլը—այստեղ մտնելս, եղել է հակառակ իմ կամքին. այս գիշեր մի պարոն յիշեցրեց ինձ արածս քայլի ամբողջ այլանդակութիւնը. նա աչքերիս առաջ բերեց իմ ամբողջ ապագան. ես պարզ տեսայ, թէ ինչ էր օպասում ինձ յետագայում. հէնց դրա համար էլ վերջ եմ դնում իմ կեանքին»...

Սա, իհարկէ, այն կինն էր, որից ես ապտակ էի ստացել...

Այդ դէպքից յետոյ ես բոլորովին ուրիշ մարդ դարձայ, սրտի խորքիցս ներուժն էի խնդրում բոլոր այն անհատներից, որոնց այսպէս, թէ այնպէս ստորացրել, անպատուել էի...

Որոշեցի այլևս երբեք չխմել...

Բայց ինչ օգուտ, կեանքս արդէն բոլորովին քայքայուել էր. վաղուց տանջուած էի թոքախտից: Այժմ, սիրելիս, ես ի՞նչ եմ սպասում կեանքից—ոչինչ և ոչինչ... Այսօր—վաղը սառը դիակս կձգեն փոսը և դա կլինի կեանքիս հատուցումը...

Ընկերս վերջացրեց իր պատմութիւնը և սկսեց մի անսովոր հայեացքով նայել աչքերիս. յանկարծ նրա դէմքը մի տարօրինակ արտայայտութիւն ստացաւ—աչքերի կոպերը լայնացան, շրթունքները սկսեցին դողալ...

Ես վախեցած վազեցի ջուր բերելու... բայց չեմ կարողանում այն սարսափը նկարագրել, երբ ջրով լիքը բաժակը ձեռիս մտայ սենեակ... նա նստել էր մահճակալի վրայ իբրև մի կենդանի մեռել և մի սրուակ բերնին դրած՝ խելագարի նման խմում էր միջի հեղուկը... Ես ճշացի և ձեռքիս ջուրը անզգայօրէն վայր թափելով՝ վազեցի նրա մօտ... Բայց արդէն ուշ էր... նա դատարկ սրուակը մի կողմ ձգելով, անբնական, տարօրինակ ժպիտը երեսին արտասանեց.

— Սուրեն, յիշիր այն կնոջ նամակը... Ես էլ նոյնը ասում եմ
քեզ... գուցէ և աւելին էլ...

Եւ մինչ բժիշկը օգնութեան էր հասնում—սոսկալի տանջանք-
ների մէջ շունչը փչեց իմ սիրելի ընկերը...

Թ. Ախայեան

Նոր-Նախիջևան

Գ Ա Ղ Թ Ը

Անձ այր ու անվերջ յամբ քայլերով՝
Գալիս են կրկին, խոճմբ-խոճմբ, շարէ-շար
Գունատ, ուժասպառ, վտխո ու տկար,
Բանուած անհուն ցաւով, երկունքով՝

Սար ու ձորերով,
Մութ անտառներով
Գալիս են յոգնած...

Անյայտ խաւարում քամին է ոռնում,
Անտակ ձորերում տալիս արձագանք,
Արնոտ ջրերն էլ իրանց հառաչանք՝
Թշուառի լացին—սուգին են խառնում

Ու տանում անվերջ
Սև կեանքերը շէջ՝
Գարուն չը տեսած...

Ու քար աշխարհի որդիքը թշուառ,
Դարձած անողորմ բախտին խաղալիք,
Թշնամուն թողած տուն ու հայրենիք,
Քաղցած ու ծարմւ, մերկ, սարսափահար

Գալիս են կրկին
Վշտերը սրտին,
Անյոյս, մոլորում...

Գալիս են անվերջ, գալիս օրերով,
Ուրուականի պէս տխուր, երերուն,
Ծեր, ջահէլ, մանուկ անտէր ու անտոն՝
Նոր կեանքի յոյսով, լոյսի կարօտով՝

Վիշտը դէմքերին,
Արցունքն աչքերին,
Թախճոտ, ախրամած...

Իսկ դաժան մահը—կեանքին թշնամի՝
Հնձում է կեանքեր կարօտ վառ դարնան,
Շուրջս անէծքներ, կսկիճ, ծով արեան,
Գերեզման անթաղ, սև դիակներ...

Անխոնի, անաղծթը,
Բուռ հողի կարօտ՝
Անտէր, մոռացուած...

Ու մահառարտու այս դառն օրերին
Քարանուժ ես ծով կարիքի հանդէպ.
Էլ չես հաւատում՝ սէր ու տէ՛նչ վսեմ,
Ե՛րբ, երանգ, յոյսեր քեզ թւում են սին.

Ու ջանը կեանքի,
Լապտերը փառքի
Կարծում ես մարած...

Օ՛ր... անգլ իմ տոկուն, պիտ ապրիս դու դեռ,
Լապտերը կեանքիդ չի մարել երբեք.
Արնոտ օրերին քո այս վշտաբեկ
Պիտի յաջորդեն պայծառ գարուններ,
Պիտի մոռացուի
Այս դառն օրհասի
Օրերը անցած...

Գազիկ Մխիթարեան

Ռոստով Դ-վ.

*
**

..Եւ երգը հնչեց... մեղմիկ դողացին
Լարերը դողդոջ. երգիչը ուժգին
Լուռ պրկեց նորից քնքուշ քնարից
Մի նոր խուրձ կրգեր... դողացին նորից...
Քնարը լացեց... ցնցուկեց թեթև
Ու երգը անցաւ, հեռացաւ անթև
Լացող քնարից... հեռացաւ յաւէտ
Տխուր քնարից մեռնող երգչի հետ...
Ու երգը մեռաւ... քնարը դողաց
Մեռնող հրգի հետ ու լռեց կամաց...
Տխուր դողացին մթին խաւարում
Ուռիները լուռ անշշտէկ, հեռուն...

Արշարունի

«Ա Յ Ն Տ Ե Ղ»

(Պատկեր)

Գիշեր էր. խաւար գիշեր: Երկնային լուսատուները կարծես բո-
լորը խօսք մէկ էին հղած աւելի մթնեցնելու մի խումբ գաղթական-
ների անվերջ ու անծայր ճանապարհը, որոնց սրտերը այդ գիշերիցն
էլ աւելի մութն էր ու տխուր...

Նրանք գնում էին լուռ ու մունջ, անհանգիստ կերպով ականջ
դնելով ամեն մի փոքրիկ շշուկին ու ձայնին...

Բոլորն էլ լուռ էին... Ի՞նչ խօսէին—ինչի՞ մասին խօսէին... Չէ՞
որ ամենքի ցաւն էլ նոյնն էր, ամենքի հոգսն էլ հաւասար...

Տարիների աշխատանքը՝ արիւն քրտինքով ձեռք բերած հարս-
տութիւնները թողել էին Արարչի կամքին, իսկ իրանք, կարօտ չոր
կտոր հացի՝ գնում էին փրկարար աշխարհ...

Նրանցից շատերը կորցրել էին իրանց տան մեծերին, և այժմ
հաւաքելով ողջ մնացած որբերին—շտապում էին օր առաջ տեղ հաս-
նել ու մի կերպ ազատել գոնէ այդ անմեղների կեանքը:

«Մայրիկ», լսուեց յանկարծ մեռելային լուռթեան միջից մի ե-
րեխայի տկար ձայն:

— Ի՞նչ է, բալիկս, ի՞նչ ես ուզում...

— Մայրիկ, հաց, հաց եմ ուզում, քաղցած եմ...

— Մի քիչ էլ սպասիր աղաւնեակս, շուտով տեղ կհասնենք...
այնտեղ կտամ հաց...

— Ո՞րտեղ, մայրիկ,—հետաքրքրուեց մանուկը, երբ մօր բերա-
նից լսեց այնքան փայփայած հացի անունը:

— Ա՛յ, այնտեղ, աղջիկս, այն սարերից դէնը—ցոյց տուեց մայ-
րը գիշերուայ մթութեան մէջ՝ ինքն էլ չիմանալով թէ ո՞ր կողմն էր
այդ «այնտեղ»-ը:

— Մայրիկ, այնտեղ հաց շատ կայ...

— Այո՛, բալիկս, խիտ շատ...

— Սուրիկի՞ն էլ կտաս, մայրիկ, երբ տեղ հասնենք.

— Անպատճառ աղաւնեակս, անպատճառ, Սուրիկին էլ կը տամ
քեզ էլ կտամ, Աստղիկին էլ կտամ... բոլորդ էլ կուշտ կլինէք...

— Մայրիկ «այնտեղ» շորե՞ր էլ կտան, նորից առարկեց մա-
նուկը, շոյելով իր թաց ու պատառոտուած շորերը. տես, մայրիկ,
իմը ինչպէս թաց է... ես մըսում եմ:

— Քիչ էլ սպասիր, Շուշիկս, երբ «այնտեղ» հասնենք շորեր էլ կունենանք ու տաք տներ էլ:

— Մայրիկ, «այնտեղ» թուրքեր չկան, յանկարծ մէջ մտաւ Սուրիկը, որ մինչ այդ մօր փէշից բռնած հազիւ քաշ տալով իր թուլացած ոտները—լսում էր մօր ու քրոջ խօսակցութիւնը առատ հացի մասին և մտքում ուրախանում իրան հասնելիք հացի բաժնովը:

— Չէ, գառնուկս, այնտեղ թուրքեր չկան, բոլորն էլ մեզ նման մարդիկ են:

— Նրանց որդիքն էլ մեզ պէս թրջուած ու քաղցած են... նորից մէջ մտաւ Շուշիկը:

Մայրը աշխատում էր նրանց հարցասիրութեանը բաւարարութիւն տալ, որպէսզի մի քանի րոպէ մոռանային «հաց»-ը և իրանց ճիչերով չճմլէին իր, առանց այն էլ ճմլուած սիրտը:

— Չէ, բալիկս, «այնտեղ» բոլոր երեխաներն էլ կուշտ են ու տաք հագնուած:

Այս խօսքերի հետ միասին, գիշերուայ մթութեան մէջ, նրա աչքերից վայր գլորուեցին արտասուքի երկու փոքրիկ կաթիլներ:

— Մայրիկ—ընդհատեց նորից Շուշիկը, կարծես մի բան մտաբերելով—երեկ դու ասացիր, որ հայրիկը շուտով կգայ, ապա սրտեղ է, ինչո՞ւ չեկաւ:

Խեղճ մօր աչքերը նորից լցուեցին արտասուքով. մանկան անմեղ հարցերը քրքրում էին նրա վերքերը ու տակն ու վրայ անում խոցուած սիրտը. ի՞նչ ասէր, ի՞նչ պատասխանէր: Չէ որ նրանց հայրը չկար, կենդանի չէր. նա զո՞հ էր գնացել թուրքերի գնդակին:

— Կգայ բալիկս, կգայ—այ, այն սարերից դէնը անցնենք՝ հայրիկն էլ կգայ ու բոլորս միասին հանգիստ կապրենք—հազիւ արտասանեց խեղճ կինը՝ արտասուքը խեղդեց նրան:

Նորից տիրեց լուսթիւն... Շուշիկն ու Սուրիկն էլ լռեցին՝ հաստատ համոզուած լինելով, որ էգուց հաց էլ կունենան, շոր էլ, հայրիկն էլ կգայ ու բոլորը միասին բախտաւոր կապրեն:

— Մայրիկ, հաց...

— Մայրիկ, ջր...

— Մայրիկ, թաց է, մրսում ենք... լսում էր ամեն կողմից գիշերուայ մթութեան միջից բաց գաշտի մէջ—թեթև արձագանք տալով չորս կողմը:

— Մայրիկ, ես հաց չեմ ուզում, էգուց հայրիկը կգայ—հար-

ցրեց փոքրիկ Սուրիկը մօր վզին փաթաթուելով...

— Քնիր, քնիր, բալիկս, հանգիստ քնիր, էգուց հայրիկն անպատճառ կգայ. կհասնենք «այնտեղ»—հաց էլ կունենանք, շոր էլ ու տաք տներ էլ... ու բոլորս միասին հանգիստ կապրենք:

Դեռ ամեն կողմից լսում էր երեխաների գանգատները թոյլ ձայները՝ երբ Շուշիկն ու Սուրիկը՝ իրանց մօր կողքին՝ խոնաւ գետնի վրայ պառկած ըռն մտան

Առաւօտեան գաղթականները վերկացան նորից շարունակելու իրանց անվերջ ճանապարհը՝ բայց Շուշիկն ու Սուրիկը էլ չվերկացան:

Նրանք մնացին յաւիտեան քնած...

Խեղճ մայրը արտասուքի վերջին կաթիլներն էլ քամեց երկու քամբախտ որդոց վրայ և կրծքին պինդ սեղմելով վերջին երեխային՝ Ասողիկին՝ շարունակեց ճանապարհը միւս գաղթականների հետ միասին պէպի ազատութեան երկիրը, թողնելով հարազատ երկրում իր սիրտն ու հոգին, ընտանիքի կէսից աւելին:

Խ. Տիրացունան

Նոր-Նախիջևան

ԱԼԻԿՈՄՈՒԹԻԻՆ

(В. Брюсовъ-ից*)

Դէպի ըսպիտակ քարերն՝ աղմուկով՝
Գալիս են գալիս սե-սե ալիքներ,
Ենեիով հեռուից չափածոյ շարքով՝
Վայր են խոնարհուս փրփրոտ գըլուխներ:

Իր հեռաստանից՝ ծովը գիշերուան
Կոհակներ է միշտ կարգով ուղարկում,
Ըսպիտակ քարերն այն անշնչական
Ճակատողներն դիտելով ծածկում:

Գիշերամիջի յամառ ջրերին
Մի քանդիչ ոգի տիրում է հիմա:
Վերցրած մի աղմուկ խոնարհ, անլուին՝
Գընում են խըմբերն ուղիղ դէպի մահ:

Սիմ. Բաքիեան

Եալթա

* * *

Տանջալից կեանքի ծանր բեռի տակ
Գնում եմ յառաջ անյոյս, դալկացած.
Նաւակս անդեկ ծովում անյատակ,
Տարերքի ձեռքին խաղալիք դարձած:

Ի՞նչ անորոշ է ճամբան անկայան,
Մարդիկ քարասիրտ, անգութ, անասան,
Երկինքը մոռյլ, լուսինը խաւար,
Երկիրն ամալի՝ թալան ու աւար...

Ո՞վ վառեց կրակն իմ մարած սրտի՝
Լինել միշտ պաշտպան սուրբ հայրենիքի,
Ո՞վ ուսոյց լինել մարդասպան անհաշտ՝
Խաղաղ անկիւնից նետուել մարտի դաշտ:

Եւ այսպէս անվերջ մըտքերս յուզում՝
Ձեռն տալիս հանգիստ կեանքում—երագում...
Երկինքն է լալիս, սգում, աղերսում,
Իսկ մարդիկ դաժան՝ երբեք չեն սարսում...

Յ. Ալ.

Ստաւրոպոլ

*) Ժամանակակից յայտնի ուսու բանաստեղծ:

Գ Ի Ն Ե Մ Ո Լ Ը

(Պատմուածք)

I

Քսան և հինգ գարուներ տեսած՝ մի գեղիցիկ և առողջ տղա-
մարդ էր Չ... գիւղացի Շարբաթենց Դուկասը: Նա քսան տարեկան
հասակում ամուսնացել էր նոյն գիւղի բազազ Պողոսի մինուճար աղ-
ջկայ—Նարգիզի հետ: Գեղիցիկ էր Նարգիզը, որպէս մայրսուան նո-
րաբաց վարդ: Նրա փայլուն դէմքի վրայ խաղում էր միշտ մի ան-
մեղ ժպիտ, իսկ սևորակ, ծովի պէս մութ աչքերը, այնպէս ցոլուն ու
զրաւիչ էին, որ ժամանակին գիւղի երիտասարդները նրա աչքերի
վրայ խաղ էին կապել «Սոււմար աչքեր» սկսուածքով ու երգում էին
միշտ: Նրա երկար, սև սաթի պէս խիտ մազերը, որպէս մըրկայոյզ
ծովի ալիքներ, ծածան, ծածան, ոլոր-մոլոր իջնում էին ուսերի վը-
րայ՝ բաժանուելով երկու մասի ու ծածկելով կուրծքն ու մէջքը՝ նը-
րան յաւերժահարսի տեսք էին տալիս:

Չ... գիւղի Կարմիր-թաղ կոչուած փողոցում նրանք ունէին մի
մանրածախսի փոքրիկ խանութ, որի յետին մասում կար երկու փոք-
րիկ սենեակներ, որոնք բաժանուած էին խանութից տախտակամա-
ծով, միայն փոքրիկ դուռը միացնում էր խանութը տան հետ. այդ
նրանց բնակութեան տեղն էր:

Առաւօտից մինչև երեկոյ Դուկասը իր գիւղական այցելուներին
հետ զանազան հանաքներ անելով՝ առևտուր էր անում: Ուրախ էր
նա, նրա գործը լաւ էր գնում. յիսուն մանէթի ապրանքը չորս-հինգ
տարուայ ընթացքում շահել էր մի քանի հարիւրներ—ամեն ծախսից
դուրս. էլ ի՞նչ է հարկաւոր գիւղական խանութպանին: Նա իր մուշ-
տարիներին առանց ծիծաղեցնելու ու հանաքների ճանապարհ չէր
ձգում. գիւղացիք սիրում էին նրան իրանց հարազատ եղբոր պէս ու
միշտ «Դուկաս-ախբէր» էին կանչում:

Ամառ էր. արևի կիզող ճառագայթները ընկած ծաղկաշատ սար
ու ձորերի և ծփան արտերի վրայ՝ տալիս էին նրանց մի տեսակ
դրախտական փայլ: Գիւղական աշխատանքի ամենսեռանդուն ժամա-
նակն էր: Մի կողմից սկսել էին հունձը, միւս կողմից՝ խուրձ կա-
պելը, սայլերի վրայ բառնալը: Մի տեղ լուռում էր գիւղական աղջիկ-
ների քրքիջն ու ուրախ երգերի արձագանքը, միւս տեղ օրուայ աշ-

խատանքից պրծած ընտանիքի անդամները ցորենի խուրձի մօտ շուրջ բոլորած՝ ուրախ-ուրախ բարձրածայն խօսելով ու ծիծաղելով ճաշում էին. սեր, կարագ, մածուն, պանիր, թանսպուր, և դրանց վրայ աւելացրած մի շիշ օղին և մի սափոր սառնորակ ջուրը՝ լրացնում էր դիւզական համեստ ճաշի լիակատարութիւնը:

Օրուայ աշխատանքը վերջացնելուց յետոյ, գիւղացիք խումբ-խումբ դիմում էին գիւղ՝ գիշերելու և վերականգնելու իրանց ոյժերը միւս օրուայ աշխատանքի համար, և ամեն անգամ, երբ նրանք մտնում էին գիւղ՝ տուն չէին գնում առանց այցելութեան մեր դուքանչի Աուկասին:

— Անկաս ախրէր, դէհ բեր էն օրհնուած ջուրը, մի քիչ բողազներս թրջենք, ասում էին ամեն երեկոյ ներս մտնելով նրա խանութը ու նստելով դախլի առջ քրտնաշան գիւղացիք:

Աուկասը արդէն ընտելացել էր այդ ամենօրեայ գիւղացոց պահանջին: Նա բաց էր անում օղիի շիշը և դատարկելով նրանց թուին համեմատ բաժակների մէջ՝ մնացածը գնում դախլի վրայ:

է, էհ, էդ չեղաւ, հէր օխնած, մենք քեզ մեր հալալ ախրօրից չենք ջոկում. դու էլ մեզ անպատիւ ես անում, բեր մի ստաքան էլ քեզ համար, թէ չէ, առանց քեզ մեր բողազից վար չի գնալ:

Աուկասը մի քիչ նազ ու դուզ էր անում, և երբ տեսնում էր, որ չի յաջողում իր մերժումը՝ մի բաժակ էլ իր համար էր ածում:

— Այ, այդպէս, ողորմի բու հօրը, տես, լաւ բանին հիվ գէշ կասի. դէ վերցրէք ախրատիք, Աստուած մեզ, մեր քիւլփաթին ջան սաղութիւն ու մեր գործին աջողութիւն տայ, ասում էր նրանցից ամենահասակաւորը: Ամմէն, ամմէն լաւում էր միւսներին բերանից և օղու բաժակները մի ակնթարթում դատարկում էին: Առաջին շրին յաջորդում էր երկրորդը, երրորդը, չորրորդը մինչև որ բոլորն էլ հարբած ցրում էին իրանց տները:

Եւ այսպէս Աուկասը անում էր իր առևտուրը ամեն օր և ամեն մի խմբի հետ հաւասար մի քանի բաժակներ դատարկում:

II

Աշնան ցրտաշունչ երեկոներից մէկն էր: Քաթին ուժգնօրէն փչում էր, հա փչում ու ծառերի դեղնած տերևները մէկիկ-մէկիկ գետին գլորում: Ամպամած էր երկինքը ու կաթկաթող անձրևի կա-

թիւները, իր անարկու թշնամուց—քամուց յաղթուելով՝ մղում, զարկում էին գիւղի խրճիթների ապակիներին և փողոցով անցուղարձ անողների դէմքերին:

Չ... գիւղը ոչ մի կենդանութեան նշոյլ չէր ցոյց տալիս, բացի մի քանի խանութներից ու պանդուկներից, որտեղ առաստաղներից կախուած լամպարների մոտայ լոյսի տակ շարժում էին մարդիկ: Ոմանք խանութներից առևտուր էին անում, իսկ ոմանք էլ այս կամ այն գինետանը նստած՝ մի քանի հոգի միասին Բաքոսին էին ծառայում:

Աուկասի խանութում դախլի յետը նստած էր մի դեռատի կին, որը գուլպան ձեռքին՝ ախուր-տրտում, մերթ գործում էր, մերթ նայում պատուհանին: Նարզիզն էր այն, որ սպասում էր Աուկասին: Գունատ էր նրա դէմքը, գեղեցիկ, սևորակ աչքերում նկատելի էին արցունքի կաթիլներ: Նա ընթի տակ մրմուռում էր մի ինչ որ ախուր եղանակ, անշուշտ, այդ նրա անհուն վշտի մրմուռներն էին, որ քանի գնում այնքան աւելի դողդողում էին նրա շրթունքներում:

— Բարի իրիկուն, քոյրիկ, մէկ Ֆունտ շաքար և 10 կոպէկի չայ տուր, ասաց ներս մտնելով Սանթուրենց Յովօն, հեր է Աուկաս ախրէրը չի երևում. օրական մի քանի անգամ գալիս եմ, միշտ էլ չկայ, ու չկայ, չլինի հիւանդ է:

— Չէ, ասաց Նարգիզը, տալով նրան թէյն ու շաքարը ու ախուր դէմքին մի կեղծ ժպիտ տալով, գործի տէր մարդ է, ես ի՞նչ գիտեմ, բաղաք է գնում—գալիս ապրանքի, հաշիւներ ունի սրտ նրա հետ, գնում է առնելիքները ստանալու...

— Հն, քոյրիկ ջան, Աստուած տայ գործերդ լաւ լինի, մեղք է Աուկաս ախրէրս, չարչարանքը շատ է, գործը որ կայ մարդուս սիրտն ու հոգին է, առանց գործի կեանք չկայ: Դէ, էս էլ նշնի էն հին տալիքիս վրայ, էս երկու օրս ալուր պիտի տանիմ քաղաք ծախելու, ծախեմ տալիքս կըբրեմ,—ասաց գիւղացին ու դուրս եկաւ խանութից...

— Ա՛խ, Աուկաս, Աուկաս, հառաչեց Նարգիզը գիւղացու գնալուց յետոյ,—էս ի՞նչ օրի ձգեցիր դու մեզ: Խմելը մէկ օր կլինի, երկու օր կլինի, ախար էս երեք ամիս ա դու խմելուց աչք չես բացել: Գալիս ես ապրանքը տանում ու փողի երես չէնք տեսնում. ասում են նշնի, ախար հր մէկը նշնեմ, հր մէկինը միտքս պահեմ: Մենակ էս Յովօի պարտքը 15 մանէթից անցաւ ու հլա էլի տանում է

ու տանում ու փողի երես չենք տեսնում: Ասում ա շէս էրկու օրս կրերեմ»: քանի էրկու օրեր են անցել, ու էսպէս քանի—քանիսներն են խաբում: Չես տալիս—հին պարտքը չի բերի, պիտի կորած հաշուես. տալիս ես—դուքաններս է քանդում... վայ ինձ, հողը գլխիս, հարաբ ինչ չար ասողի տակ եմ եղել ծնուած... անխ, անխ, անխ, անիծուիք դուք, այ սաբարներ, որ նրան խմել չսովորեցնէիք ու էս օրին չձգէիք մեզ:

Ուշ գիշեր էր. Նարգիզը վեր կացաւ տեղից, խանութի դուռը ներսից փակեց ու մօտեցաւ կախուած լամպին, որ հանգցնի ու ներսի դռնով դնայ սենեակը՝ որ յանկարծ դուռը ծեծեցին:

Նարգիզը բացեց դուռը ու սարսափից յետ-յետ քաշուեց: Խանութ մտաւ գլխաբաց, ցաք ու ցրիւ մագիւրով, ուռած աչքերով, կարմիր—կրակի պէս թէժ ու արիւնոտ երեսով մի տղամարդ ու տատանուելով ընկաւ դախլի մօտ դրած աթոռի վրայ, իսկ արիւնը նրա ճակատից սկսեց կաթ-կաթ ծորել... Դա Ղուկասն էր:

էդ ի՞նչ է, այ մարդ,—ձեռքերը ծնկանը խփելով ձչաց Նարգիզը ու մօտեցնելով նրա ճակատին թաշկինակը՝ սկսեց արիւնը սրբել:

— Թճճող... գոռաց Ղուկասը, թաշկինակը յետ հրելով, ի՞նչ բոբանն է իմ գործերիս խառնուելը. վեր եմ ընկել, էլ ի՞նչ կայ. արունը կաթի-կաթի՝ կանցնի: Դու արբանդ բեր, արբանդ, սիրտս վառում է. ծառաւ եմ, ծառաւ. ի՞նչ ես ծոմուում, քեզ հետ չեմ. չէի ուզում գալ, համմա բազազ Սաթայէլի խաթրը չկտորեցի, ասաւ՝ ինձի թաղես՝ թէ տուն չերթաս. համմա ափսոս, ի՞նչ կամպանիա էր. ուհ, քու հոգուն մեռնիմ արադ ու գլխի ստեղծող: Եարան ասանց դրան կեանք կայ աշխարհում. Նարգիզ, բերում ես, թէ չէ:

Նարգիզը լուռ, գունատ, դախլի տակից հանելով արաղի շիշը—բացեց ու մի քիչ հաց ու պանիր էլ հետը—դրեց նրա առաջ: Ղուկասը երբ տեսաւ արաղի շիշը, դէմքը պայծառացաւ: Նա վերցրեց շիշը, լցրեց արաղը լաժակի մէջ և մի ակնթարթում դատարկեց ու իսկույն լցնելով երկրորդ լաժակը՝ դրեց դախլի վրայ ու փաղաքշական տոնով ասաց.

— Դարդ մի անի, Նարգիզ ջան, խմելը... ը... ը... թարկ եմ անելու. դէ, ընկեր տղերք են, նրանց խաթրը կտորել չի լինի. դէ մի քիչ էլ էդ անտէրը սիրում եմ. ի՞նչ անենք, հալբաթ մի օր էլ վերջ կտամ, էլ չեմ խմի. դու էն ասա ի՞նչքան առուտուր ես արել էս օր. փող—մող ունես, բեր մի քանի մանէթ փող տուր. ես էլ մարդ եմ, մարդամէջ եմ դուրս գալիս, ամօթ ա:

— Այ, մարդ, ասաց Նարգիզը յանդիմանական եղանակով, դուքանդ դատարկուել է, ապրանք չկայ, ամեն օր գլուղացիները, որոնց դու նլսիա էիր տալիս՝ միշտ տանում են, հա տանում ու հին պարտքի վրայ նորը աւելացնում... Դու էլ մի կողմից ես էս մի քանի շահու առուտուրը տանում միկիտանը ծախսում ամեն Աստու. օրը... Ախար մի մտածիր, այ մարդ, ի՞նչ պիտի լինի մեր օրը:

Շատ ես խօսում, չես տալի, շ... աղջիկ, հայհոյելով ձեռքը խփեց սեղանին Ղուկասը, քեզ հետ, որ մարդավարի եմ խօսում, դու էլ ինձ էջի տեղ ես դնում ու ուզում ես փողերը պահել: Քեզ եմ ասում, քանի էդ մագիւրիցք քարշ չեմ տուել, բեր մի քանի մանէթ փող տուր: Դուքանը քոնն է թէ իմը. դու հալա շնորհակալ եղիր, որ քեզ դավերիթ եմ անում խանութը. թէ չէ կկողպեմ ու էն վախտը անութի շան պէս կսատկես: Բեր, ասում եմ, շուտ, գոռաց նա սպառնական հայեացք ձգելով Նարգիզի վրայ, որը կանգնած էր մի անկուսում պաշտպանողական դիրք բռնած:

— Չեմ կարող, այ մարդ, մի քանի շահի փող կայ, էն էլ տանիս, ախար ամեն օր...

Օ՞ճֆ, գոռաց Ղուկասը, դատարկ օդու շիշը շարտելով դէպի Նարգիզը, որը մի վայրկենական թռիչք գործելով՝ փախաւ դէպի սենեակը, իսկ շիշը դիպչելով պատին՝ փշուր, փշուր եղաւ... Ասա, Ղուկաս, ի՞նչ ես յիմարի հետ խօսում, մոմոաց նա ինքն իրան ու վերկենալով տեղից, օրօրուելով մօտեցաւ փողարկղին, դուրս քաշեց ու դատարկելով փողերը գրպանը՝ ինքնարաւական կերպով ասաց.—Նարգիզ, այ Նարգիզ, էստեղ արի, ես քեզ հետ համաք էի անում. դու էլ ինձնից նեղանում ես. հա, հա, հա, հա... դէ, արի, դուռը կողպիր, ես գնում եմ, էլ քեզ անհանգիստ չեմ անի: Է՞, հէյ ջան, ընկերներ, ես գիտեմ, ը... առանց Ղուկասի ձեր օրը օր չէ: Ես ձեզ իսկի կմոռանամ: Գալիս եմ, գալիս, ձեր հոգուն մեռնիմ: Ես իմ խօսքիս տէրն եմ, զուր չեմ գտակս ը... ձեզ մօտ գրաւ թողիլ: Բերդիցը դուրս ելայ այ... Ալագեանդ տեսայ, այ, խանում եւա ջան...

— Ղուկաս, ուր, Ղուկաս, ախար ես մեռակ, անխ Աստուած... աղաղակեց խեղճ Նարգիզը վազելով դէպի խանութի դուռը ու բռնելով Ղուկասի թևից:

— Հեռու, աներես, թող ինձ, մոնչաց Ղուկասը ու մի այնպիսի հարուած տուեց Նարգիզի սրտին, որ նա փոռեց յատակին:

Գիշերային խաւարի մէջ տեղացող յորդ անձրևի վշտցի հետ

լուում էր «Ալագեադ» երգի ձայնը, որը քանի գնում անլսելի էր դառնում:

Ղուկասն էր, որ երգելով նորից գինեատուն էր գնում:

III

Ապրիլ ամիսն էր. բնութիւնը կենդանանում էր. սարերի ու ձորերի ձիւնից գոյացած բազմաձև դժբերիկ առուակները արևի կենսատու ճառագայթների տակ պսպղալով առաջ էին ընթանում: Նրանց քչքչան ձայնը միախառնուելով բազմաթիւ թռչնիկների ծըլըլըցոցին՝ մարդու սիրտը լցնում էին մի անհուն բերկրութեամբ:

Ուրախ էր գիւղացին, որ ազատուած մահասարսուռ ձմրան արհաւիրքներից՝ նորից պիտի նուիրուէր իր սիրելի դաշտային աշխատանքներին ու դատարկ ամբարները նորից պիտի լցուէին ոսկեհատիկ ցորենով:

Կարմիր թաղում գտնուող Ղուկասի խանութը կողպուել էր արդէն: Նրա փակ դռան առաջ մի քանի գիւղացի մանուկներ վէզ էին խաղում: Յանկարծ նրանց մէջ վէճ ծագեց ու սկսեցին աղմկել, հայհոյել ու իրար քաշքշել: Այդ միջոցին խանութի կողքի դուռը բացուեց ու դռան մէջ երևաց մի ծեր կին ահագին մահակը ձեռքին և սկսեց նախատել ու սպառնալ նրանց:

— Ա՛յ, լակոտներ, գոնէ մի բիչ ասառ ու արուռ ունեցէք, ի՞նչ էք օրերով էստեղ քարշ գալիս կուում— ձէներդ երկինք հանում, հեռացէք էստեղից, թէ չէ... նա ցոյց տուեց մահակը ու առաջ անցաւ...

Երեխաները մահակը տեսնելուն պէս ցրուեցին զանազան կողմեր...

— Չեն ասում, թէ հիւանդ կայ, ամբողջ գիշեր չեմ քնել, զօրն էլ չեն թողնում մի բիչ մարդ դինջանայ— մոմաց պառաւը ներս մտնելով ու ծածկելով բակի դուռը:

Իս նարգիզի մայր Շողօն էր:

Այն օրից, երբ Ղուկասը հարուածեց նարգիզին ու ինքը գնաց գինեատուն՝ նարգիզի սրտում մնաց մի սոսկալի ցաւ, որը դեռ այնքան էլ զգալի չէր: Ամբողջ ձմեռը նարգիզը մին-մինակ կառավարում էր խանութը: Է՛հ, ի՞նչ կառավարել, բացի փաստից օգուտ չկար: Եթէ օրական մի քանի մանէթի առևտուր լինում էլ էր, այդ էլ երեկոները Ղուկասն էր գալիս ածում գրպանը՝ ու նորից դիմում գինեատուն:

Խանութը դատարկուելու հոգսը մի կողմից և գլխաւորապէս սրտի ցաւի սասականալը միւս կողմից, հիւժուած ու տանջուած նարգիզին անկողին ձգեցին: Անշուք ու ցածր առաստաղով սենեակի մի անկիւնում թախտի վրայ պռակած էր նա անտէր ու անտիրական: Միայն ծերունի մայրն էր, որ լսելով իր աղջկայ հիւանդանալը՝ շտապեց իր մայրական սիրով ու գուրգուրանքով թեթևացնելու աղջկայ ցաւը:

Ծանր էր նարգիզի դրութիւնը. սոսկալի սրտի ցաւը սուր բնաւորութիւն էր ստացել ու մի բոպէ հանգիստ չէր տալիս նրան... Հագն էլ մի կողմից էր պակասը լրացնում: Գիւղի «ճէքիմ»-ները արդէն յոյսերը կտրել էին նրանից ու «չի ապրի» ասելով՝ դադարեցրել էին իրանց այցելութիւնները: Միայն սիրող մայրն էր, որ գիշերները մինչև լոյս, անքուն նստած նրա թախտի մօտ՝ սփոփանքի խօսքեր էր աւելում:

Լուսադէմ էր, հըր ամբողջ գիշեր տանջուելուց յետոյ քնեց հիւանդը: Շողօն վերկացաւ տեղից, մի բարակ կարպետ փոց յատակին հիւանդի թախտի առաջ ու պռակեց մի փոքր հանգստութիւն տալու իր տանջուած ոսկրներին:

Տիրեց լուսթիւն. լուում էր միայն հիւանդի ծանր շնչառութեան ձայնը...

Յանկարծ նարգիզը շարժուեց անկողնի մէջ ու սկսեց զառանցել:

«Ղուկաս, ո՛ւր էլի, Ղուկաս, ինչ անաստուածն էս, ախար ես մեռակ... սեֆֆ... ինչ անբախտ աղջիկ եմ ես. վաճա՛յ, էդ ի՞նչ է, արի՛ւն, արի՛ւն, ես մեռեալ... խանութը դատարկ. վա՛յ սիրտս» ճչաց հիւանդը ու բացեց աչքերը:

Շողօն վերկացաւ տեղից ու նստելով գլխավերև սկսեց հանգստացնել նրան: Նա ուշի-ուշով նայեց հիւանդի դէմքին ու նրա աչքերը լցուեցին արտասուքով: Որպիսի՛ տարբերութիւն նախկին և այժմուայ նարգիզի մէջ. նրա գեղեցիկ, լուսնի նման բոլորակ դէմքը այժմ երկարել ու մաշուել էր, իսկ գեղեցիկ, հմայիչ աչքերը փոս էին ընկել ու կորցրել իրանց փայլն ու կրակը: Նախկին նարգիզի այժմ մնացել էր գերեզմանից դուրս եկած մի կմախք, միայն այն տարբերութեամբ, որ սրա վրայ դեռ շունչ կար: Նա նայեց նարգիզի կիսաբաց աչքերին ու էլ չկարողացաւ իրան զսպել. կամաց վերկացաւ հիւանդի մօտից, անցաւ միւս սենեակ ու սկս'ց հեկեկալ:

— «Ղայ սիրտս, ջուր» ճչաց հիւանդը:

Շողոմն աչքերը սրբեց, վերցրեց ջրի բաժակը ու մօտենալով նը-
րան՝ աջ ձեռքով բարձրացրեց նրա գլուխը, խմացրեց ջուրը ու նո-
րից պառկեցնելով՝ նստեց նրա մօտ ու ասաց.

— Նձրգիլը ջան, ասան, քու չարը տանիմ, ինչպէս է սիրտդ, ին-
չի՞ ես այդքան նեղանում. ամբողջ գիշերը չես քնել—տանջուել ես,
քաղցած կլինիս, վերկաց բանէս, մի քիչ հաց կեր, կաթ խմիր, ախար
էդպէս չի լինի:

Դուռը ճռռաց ու շէմքում երևաց Ղուկասը. նա հարբած էր և
ձեռքի կապոցքում մի ինչ որ բան ունէր բռնած: Երբնալով ներս
մտաւ՝ Շողոմի ու Նարգիլի վրայ մի հայեացք ձգեց ու ասաց. «Բարրի
լուս, խնամի Շողո. ես ասի գնացած կլինես. Նձրգիլ, մի նեղանար,
հոգիս, ք... սոյ քեզ ինչ եմ բերել. նա ցոյց տուեց կապած թաշկի-
նակը... Գառնի՛ խորոված, գիննի՛, արբանդ, լաւաշ հաց, տօ, ինչ քնե-
լու ժամանակն է, տնայէն, ես սաղ գիշերը չեմ քնել, էլի քունս չի
տանում. դու համ զօրն ես քնում, համ գիշերը, էդպէս»... նա անցաւ
դէպի պատուհանի կողմը՝ օրօրուելով նստեց պատուհանի մօտ դրած
աթոռի վրայ ու ինքնաբաւական ձայնով ասաց. «Համմա ծեծեցինք
քո Սարգսի տղայ Մարգարին համ, աննամուս. մեր գլխին էկել կան-
դնել ա բարող ա կարգում. «ախպրտիք, հերիք ա, տուն գնացէք, խեղճ
ու կրակ օղլուշաղ ունէք, բօլ ա ինչքան քէֆ արեցիք. ամօթ ա»: Տօ,
ախմանի, տօ անդուլուղ արլակատ, դու ո՞վ ես, որ եկել ես մեզ
խելք ես սովորացնում. մեզ՝ էս եքա միրքաւորներին ուզում ա իր
կամքով դարձնի. քու ինչ գործն ա ուրիշի օղլուշաղի հալ ու աֆհալի
մէջ մտնելը, կամ թէ չէ մեր խմելու փողը դժու ես տալիս, համ:

Համմա թէ տուց սև Համօն համ, տեղից վեր թռչելն ու սիլլա
տալը մէկ եղաւ. ասենք մենք էլ պակաս չթողինք. քիթ, բերան—տ-
րին-լելի արինք. էլի թող գնայ բախալ Սաքնին դուրբան ըլի, որ ե-
կաւ մեր ձեռքից խլեց, թէ չէ... շան սատակ կանէինք: Օ՞օֆ, ինչ եմ
երկարացնում. քաղցած եմ, բողբոջ էլ հարկաւոր է թրջել». ասաց նա
ու վեր կենալով տեղից՝ օրօրուելով քաշուեց սենեակի մի անկիւնը—
նստեց ու բանալով հետը բերած խորովածի թաշկինակը՝ սկսեց ու-
տելի—խմել ու բթի տակ մընթմընթալ:

— Անսիրտ, անաստուած. մի արհամարհական հայեացք ձգելով
նրա վրայ մոմոաց քթի տակ Շողոմն և ապա գառնալով դէպի հիւան-
դը, որը «ախ ու վախ» քաշելով տանջուում էր ցաւից՝ սկսեց նրան
աղօթել՝ «Տէր, Դու ողորմես խեղճ Նարգիլս, իմ աչքիս լոյս, իմ մի-
ակ միտքար Նարգիլս ու մի ճար, մի դարման արա սրա ցաւին»:

IV

Մայիսի սկզբներին էր, մեղմ գեփիւռը իր հովիկ շնչով օրօ-
րում էր նոր արթնացած ծառերի տերևիկները, որոնց սօսափիւնը
կանաչազարդ սարերի ու ձորերի միջով հասող ոլորապտոյտ փոքրիկ
վտակների քջքնոցի ու վարդի սիրահար սոխակների դայլայլի հետ
միախառնուած՝ մի գեղեցիկ ներդաշնակութիւն էր կազմում... Հա-
զարերանդ ծաղիկները օրօրուելով քամու մեղմ կենսաբար շնչով՝
գարնան գալուստն էին աւետում անցորդին: Ամեն տեղ աշխոյժ ու
կենդանութիւն էր տիրում:

Ձ... գիւղի կարմիր թաղում, Ղուկասնեց տան առաջ՝ կէսօրին
հաւաքուել էր գիւղական երկսեռ խառն բազմութիւն ու կարծես թէ
մէկին էին սպասում: Հասակաւոր տղամարդիկ ու ծերունի քահանան
տիրացուի հետ, դռն մօտ կանգնած բարձր-բարձր խօսում էին, եր-
բեմն ակնարկ ձգելով դէպի փողոց. և երբ տեսնում էին, որ ոչ ոք
չկա՝ նորից շարունակում էին իրանց ընդհատուած խօսակցութիւնը:

— Ձէ, նա չի գալ, ո՞վ գիտէ, էլի խմած ձրտեղ կլինի ընկած,
«մի Ղուկաս, մի գիւղ» իզուր ենք սպասում ասաց քահանան:

— Ձէ, տէր հայր, պատասխանեց մի ծերունի, մի քիչ էլ սպա-
սենք, գոցէ գտնեն բերեն, ախար ինչքան չլինի նշանածն ա, վերջին
մնաս բարեն էլ ա ասի իր դարդամեռ ջահէլ-ջիւան Նարգիլն:

— Օ՞օֆ, մէջ մտաւ քո Սարգսի տղայ Մարգարը, որը մի ան-
գամ իր բարի խորհուրդների համար մի լաւ ծեծ էր կերել Ղուկա-
սից ու նրա ընկերներից.—Ես զարմանում եմ—Ինչ էք հասկանում մի
մարդուց, որը ոչինչ չի ուզում ճանաչել, բացի գինուց և արաղից:

Կանայք տղամարդկանցից ոչ հեռու, մի փայտէ նստարանի վրայ
նստած տան պատի տակին՝ զանազան բաներ էին պատմում Նար-
գիլի մահուան մասին—նախապաշարուամիտների ազդեցութեան տակ:

— Վերջապէս երևացին մի քանի հրիտասարդներ քափ ու բըր-
տնքի մէջ կորած ու Ղուկասի թևին ընկած, որը թունդ հարբած լի-
նելով՝ գիտակցութիւնը կորցրած, ուռած աչքերն ուղղած իր առաջ-
նորդներին՝ օրօրուելով ու բթի տակ մոմալով յառաջ էր շարժում:

— Նարգիլը մեռաւ. էէ... թողէք. խաբում էք ինձ, որ տուն
տանէք. ասում են Նարգիլը մեռաւ... չէ, չէ. Նարգիլը չի մեռնի...
Ղուկաս, յանկարծ զգաստացած գոռացնա ջուխտ ձեռքով գլխին խփե-
լով...

Նարգիլը մեռաւ... դու գինի ես խմում. դու քէֆ ես անում... Ռըր է

Նարգիզը. Նարգիզ ջան, էլ չեմ խմի, չէ. աշխարհքում միայն դու էիր, որ ուշք էիր դարձնում վրաս: Ես... ես սպանեցի քեզ. ո՛ւհ, ո՛ւհ, և մօտենալով սենեակի դռանը՝ ընկաւ շէմքի վրայ ու սկսեց երեխայի նման հեկեկալ:

Կէս ժամից յետոյ՝ դուրս բերին սենեակից Նարգիզի դագաղը և միակ քահանայի ու տիրացուի առաջնորդութեամբ ճամբայ ընկան դէպի գերեզմանատուն: Դագաղի յետեից նախ գնում էին տղամարդիկ Ղուկասի թևերից բռնած, որը ոչ թէ գնում էր, այլ մի կերպ քարշ էր տալիս իր յոգնած ոտքերը և սուած աչքերը յառած դէպի Նարգիզի դագաղը՝ նայում էր, որպէս մի ապուշ ու կարծես թէ նրան այս բոլորը երազ էր թւում: Իսկ կանայք, որոնք ընթանում էին տղամարդկանցից յետոյ, կսկիծից քար կտրած, Շողօի թևերից բռնած, մերթ լալիս էին ու մերթ մխիթարական խօսքեր ասում:

V

Անցել էին տարիներ... Ձմեռ էր, ցուրտ ձմեռ. ձիւնի բուլաները փաթիլ-փաթիլ թափւում էին հա թափւում երկնքից. մի արշինաչափ ձիւնը արդէն ծածկել էր գետինը: Ձ... գիւղում ոչ մի կենդանութիւն չէր երևում: Խրճիթները, որ առանց այն էլ մի խղճալի դրութեան մէջ էին գտնւում՝ այժմ ծածկուելով ձիւնի հաստ շերտերով՝ տնքում էին նրա ծանրութիւնից և կարծես ուզում էին փլչել ու տակոյն անել բնակիչներին:

Իրիկնադէմ էր. միկիտանչի Սերոբի մօտ, ցրտից կծկուած, ոտաբորբիկ, պատառոտած շալուարը հագին, ու շապկի մի թևը բոլորովին պատած—կախ ընկած, առանց աստառի հին գլխարկը գլխին, ձեռները գրպանը դրած կորաքամակ ներս մտաւ մի ծերունի ու կանգ առնելով դախլի առաջ՝ շշնջաց.

— Սերոբ ազա, քեզ մատաղ, մրսել եմ մի հատ...:

Սերոբը դրեց նրա առաջ մի բաժակ օղի, որը վերցնելով մի վայրկեանում դատարկեց ու անցաւ դէպի գինետան խորքը, որտեղ գտնւում էին գինու տակաոնները: Նա մի կեղտոտ պարկ ձգեց անկիւնը խոնաւ հողի վրայ ու պառկեց քնելու:

Դա գինեմոլ Ղուկասն էր, որ քարշ էր տալիս իր խղճալի կեանքի վերջին դժբախտ ընկերները:

Դագիկ Մխիթարեան

Ռոստով Դ.-վ.

* * *

Անգին Նիւօիս

Այս դառն օրերին չուզեմ, նազելիս,
Ո՛չ սէր, ո՛չ գգուանք, ո՛չ կիրք մոլեգին—
Մայրենի երկրիս ողբին անսալիս
Մղկտում է իմ ցաւատանջ հոգին:

Արեան գետերում լողում է Մասիս,
Գլուխն ալեգարդ պատած՝ սև քօղով,
Ողբում են Կարին, Մուշ, ու Վան, ու Սիս,
Դողում է երկիրն օրհասի դողով:

Գուցէ և ծագի վարդագոյն արփին—
Ա՛խ, մութ է այսօր—ասես մի դամբան,
Դէզ-դէզ դիակներ եփրատի ափին՝
Սև սուգ է պատել հայերիս ճամբան:

Էլ անուրջ չունի ցոււատանջ հոգիս
Արշալոյս, թէ՞ մահ—խաւար է չորս դին.
Ո՛չ սէր, ո՛չ գգուանք չուզեմ, նազելիս,
Այս օրհասական, այս դառն օրերին:

Սիմ. Համալեան

Ա.ք-Շէյխ

ՆԱՅԻՐ ԵՂՖՍՅՐ,

Նայիր, կզբայր, այնտեղ հեռուն
Մեծ հրդեհն է բորբոքում.
Ազիզ կզբայր, հասիր հոն դուն՝
Մեծ յոյսեր են կըլանում...:

Կէս գիշերուայ խաղաղ ժամին
Անմեղ սրտեր են կոծում...:

Հիւժուած եղբորդ տանջուած կրծքին
Բոց ու մոխիր են կիտուում...

Նայիր ահա անուշ մօրդ
Անխիղճ կրակն է փարւում...
Հասիր, եղբայր, տես քրոջդ
Լպիրջ թուրքն է յօշոտում...

Դէհ, շուտ հասիր, հերոս եղբայր,
Առ քո սուրը փրկարար...
Մօտ է ժամը ազատութեան,
Այգը բացուեց փրկութեան...

Թոփտի

Խ. Տ.

Մ Ա Յ Ր Ը

(Պատկեր)

Մութ գիշիր էր. աշնանային այնպիսի մութ գիշերներից մէկը,
երբ երկու քայլի վրայ աչքը աչքին չէր կարողանում տեսնել:

Ես գիտեմ էի... գնում էի անվերջ, անծայր՝ ականջ չգնելով իմ
մզմզացող ցաւոտ ոտքերի բողբոխն, որոնք այլևս չէին ուզում հնա-
զանդուել կամքիս:

Հեռուից, շատ հեռուից լսում էր մի խումբ փախստականների
անորոշ ձայները, որը նման էր աւելի շուտ հառաչանքի, քան թէ սո-
վորական խօսակցութեան կամ ծիծաղի:

Այս անտանելի մութ գիշերին նրանք էլ ինձ պէս շտապում էին
ժամ առաջ տեղ հասնել, թէ՞ մի դժբախտութիւն էր պատահել ու
օգնութիւն էին հայցում—այդ ինձ համար մութ մնաց, որովհետեւ մի
քանի քայլ անելուց յետոյ՝ ես ընկայ վայր ու այլևս չկարողացա
շարժուել տեղիցս: Անճարացած տարածուեցի գեղնած խոտերի վրայ,
ու աչքս յառած երկնակամարին՝ մնացի անշարժ...

Մէկ էլ առաջս բացուեց ծանօթ ճանապարհը:

Ժայռի յետևից դուրս եկաւ մի կին. նրա թափթփած մազերին,
սարսափից գունատուած հրեսին ու երերուն քայլերին նայողը իս-
կոյն կիմանար, որ սա մի որեւէ հալածանքից էր խոյս տալիս:

Ճիշտ որ նոյն ժամին ժայռի յետևից դուրս եկաւ մի ձիաւոր...
նա գալիս էր կամաց ու դէս ու դէն նայելով՝ կարծես կորած որսն
էր փնտրում: Եւ երբ տեսաւ վախից սարսափած կնոջը՝ ուրախացած
խփեց ձիու կողքերին ու մի վայրկեանում հասաւ կնոջ յետևից ու
կանգնեց:

Կինը լեղապատառ եղած ուզում էր փախչել ու ազատուել այդ
մարդ-գազանի ճիրաններից, բայց ոտքերը դաւաճանեցին նրան... ու
փոուեց գետին անշնչացած:

Եկողը թուրք էր. նա ուրախացած իր յաջողութիւնից, ցած
թաւ ձիուց, մօտեցաւ նրան, քրքրուած մազերի միջից դուրս հանեց
կնոջ երեսը ու վաւաշոտ հայեացքով սկսեց ազահաբար նայել դէպի
նա...

«Ի՞նչ գեղեցիկն է... և ինչո՞ւ այսպէս գեղեցիկ պէտք է լինի մի գեաւուր»... մըմնջացին նրա շրթունքները ու աչքերը փայլեցին:

Ձին կապելով մօտակայ թփից՝ նորից մօտեցաւ խեղճ կնոջը— շուռ տուեց նրան մէջքի վրայ, ձեռները հրկու կողմ ձգեց ու ամեն մէկ ձեռքի վրայ մի քար դնելով պատրաստուում էր քակել նրա կրծքի կրճակները— մէկ էլ յանկարծ կինը զարթնեց ու ոտքերի ուժգին հարուածով գետին գլորեց անօրէն գաղանին... Թուրքը կատաղեց, ստամ- ները կրճտացին...

— «Մի հայ, այն էլ թոյլ արարած՝ կին հայ, համարձակուի ձեռք բարձրացնել ինձ վրձի», կատաղաբար գոռաց նա ու հանեց դաշոյնը, յարձակուեց խեղճ զոհի վրայ և այն է ուղում էր խփել խեղճ կնոջ կրծքին... զարթնեցի... մի անհրեայթ սարսուռ անցաւ ամբողջ մարմնովս...

Արշալոյսը նոր էր բացուում...

Սարսափահար շուրջս նայեցի հրազի ազդեցութեան տակ և կարծես ուրախացայ, երբ հաստատ համոզուեցի, որ տեսածս հրազ էր...

Փորձեցի վերկենալ, բայց իզուր. գիշերուայ խոնաուութիւնը այնքան էր ազդել յոգնած ու ջարդուած մարմնիս վրայ, որ ոչ ոտքերս էին շարժուում, ոչ ձեռներս և ոչ էլ ամբողջ մարմինս... ստիպուած պակած մնացի տեղումս:

Չորսդին լուռ էր, խոստանում էր պարզ ու գեղեցիկ օր:

Չգիտեմ, որքան կմնայի այդ դրութեան մէջ, եթէ յանկարծ իմ ականջին չհասնէր տկար հառաչանքի ձայներ:

Ամբողջապէս լսողութիւն դարձած՝ սկսեցի հետեւել ձայնին. իսկապէս ականջներս ինձ չէին խաբել: Հեռուից, շատ հեռուից, կարծես խոր ձորերի միջից խեղդուողի, թէ մեռնողի հառաչանքի ու օգնութեան ձայնի էին գալիս:

Մեքենայաբար վեր թռայ տեղիցս ու սկսեցի վազել դէպի լըսուող ձայնը:

Ամբողջ մարմինս կարծես մի ականթարթում ոյժ ու թարմութիւն ստացան ու խօսք մէկ եղած ճիգ էին թափում ժամ առաջ ինձ հասցնել կարիքի վայրը:

Չգիտեմ, այժմ չեմ կարող երևակայել նոյնիսկ, թէ ինչպէս էի վազում ես այդ ժամին, բայց միայն զգում էի, որ ներկայ պիտի լինեմ մի սրտաճմլիկ տեսարանի:

Եւ իսկապէս, մի կէս ժամ դէս-դէն վազելուց յետոյ՝ ոտքերիս

տակ տնքոցի ձայն լսելով՝ կանգ առի: Կիսամթութեան մէջ նայեցի դէպի նա. մի անգոր կին էր, մապիւր խճճուած, դէմքը այլայլուած ու ձայնը նուաղած:

Երբ աւելի մօտեցայ՝ արիւնս գլուխս խփեց. աչքերս մթնեցին, սարսափելի տեսարան էր, որ ես տեսայ՝ կնոջ ստինքների կէսերը կտրած ու դէն ձգած, իսկ կաթնախառն արիւնը ողողում էր խեղճի ամբողջ մարմինը:

— «Վաղրկս... վայ... օգնեցէք, ազատեցէք... վա-ղի-կիս»... հազիւ կարողացաւ արտասանել խեղճ հաստատակը ու փչեց հոգին:

Երբ աւելի լուսացաւ՝ նրա գլխի յետևում անշնչացած տեսայ մի մտնուկ: Սեղճի աչքերը բիբերից դուրս էին եկած, երեսը կապտած, իսկ լեզուն բերանի մի կողմից քարշ ընկած:

Երևի խեղդել էին անմեղին:

Արշակ Ազնաուրեան

Եկատերինոզար

BERCENSE

Քնիր, իմ մանուկ, անդորրի ծոցում
 Իջնում է գիշեր:
 Ազատ հանգիստ առ քո օրորոցում
 Զօրացրու ոյժեր:
 Ճողքեր ու շողքեր տես քո մանկական
 Պայծառ երազում:
 Քնիր, իմ մանուկ, քնիր սիրական,
 Օրօր եմ ասում:

Կարճ է մանկութիւնն. արագ գրոհ կըտան
 Վրադ մութ հոգսեր—
 Եւ կը կաշկանդէ կեանքի կուռ շղթան
 Քո ձգտումն ու սէր:
 Բայց դու խոչի դէմ կը կռուես ուժգին,
 Արդարացասում:
 Քնիր, իմ մանուկ, քնիր, թանկագին,
 Օրօր եմ ասում:

Աճիր, իմ չքնաղ, մեր կեանքի ձորեր
 Դեռ շատ են խոպան.—
 Դու նրանց միջից՝ անխոնջ, աներեր՝
 Անցրու քո ճամբան:
 Նրանք բաղձ ունեն ծաղկելու ազատ,
 Քեզ էլ են սպասում:
 Քնիր, իմ մանուկ, քնիր, հարազատ,
 Օրօր եմ ասում:

Գիշերը բազմեց, փլուց իւր անձիր,
 Անսահման փէշեր:
 Անոյճ քնիդ մէջ, անզին, մեծացիր,
 Զօրացրու ոյժեր.

Շուտով կեանք մտիր, դէպի նպատակ
 Գնա անկասում:
 Քնիր, իմ մանուկ, քնիր, իմ հրեշտակ,
 Օրօր եմ ասում:

Սիմ. Բաքիեան

Եալթա

ԼԵՐՄՈՆՏՈՎԻՑ

Ինձ հրեշտակների ու դրախտի համար
 Չէ ստեղծել Աստուած երկրի երեսին.
 Ինչո՞ւ եմ սակայն ապրում ցաւամար,
 Նա ինքն աւելի՞ գիտէ այդ մասին:

Չարի եմ ընտրեալ ես իմ դեի պէս,
 Դեի պէս յաւէտ գոռոզ և վըտար,
 Մարդկանց մէջ անհոգ մի պանդուխտ եմ ես,
 Ե՛ւ ողջ երկնքին և՛ երկրին օտաճր:

Եւ երբ այս կարդաս, մեր վիճակն անգատ
 Դու համեմատիր քո վառ յուշերում
 Եւ անգութ հոգով հաւատա ազատ,
 Որ մենք նըրա հետ մենակ ենք երկրում:

Ոնտփրիոս Անտփեան

Սիմֆերոպոլ

ԲԱՆՏԱՐԿԵԱԼԻ ԵՐԱԶԸ

Ես դատապարտուած երկար տարիներով տաժանակիր աշխատանքի և ընկած աշխարհի խուլ անկիւններից մէկում՝ հեռու հայրենիքից, կտրուած սիրելիներից, կարօտ ազատութեան կարծում եմ, որ սա երազ է... Երազ, որ մի քանի վայրկեանից կանցնի, կմոռացուի...

Մակայն սա երազ չէ, այլ դառն իրողութիւն... այնպիսի դառն վիճակ, որ յոյսը նոյն իսկ դժուարանում է խրախուսել՝ «Մի վնասիր, կգայ ժամանակ, կազատուես այս դառն կեանքից...»

Չորսդիս դատարկութիւն... պատերը անխօս...

Չկայ մի շունչ, որ հասկանայ ինձ, չկայ մի առարկայ, որ ծանօթ լինի իմ հոգուն... մխիթարէ ինձ... ամենքը, ամենքը անհարազատ են իմ այրուած ու տանջուած հոգուն...

Միակ մխիթարութիւնս անվերջ ու անծայր երազներն են, որոնք կարծես գալիս են ծաղրելու իմ խղճուկ դրութիւնը... խառնելու իմ ցաւերը... մղկտացնելու ցաւոտ ու տանջուած հոգիս... Միայն այդ երազներն են, որ մի քանի վայրկեանով մղում են ինձ քաղցր ազատութեան անզուգական գիրկը ու մոռացութեան են տալիս ներկայիս անողորմ դրութիւնը...

...Ահա նստած եմ մեր այգում, կանաչ խոտերի վրայ, այն առուակի եզրին, որտեղ անց եմ կացրել համարեա ամբողջ մանկութիւնս... անհոգ և ուրախ ժամերս...

Առուակից փչող գարնանային մեղմ զեփուռը կամաց շոյում է երեսս ու մազերս...

Յանկարծ աչքերիս վրայ զգում եմ մի զոյգ քնքոյշ թաթիկներ:

— Ո՞վ ես, ասն,— պատասխան չկայ. երկրորդ, երրորդ անգամ կրկնում եմ հարցս և պատասխան չստանալով՝ կամաց յետ եմ անում ձեռները և երեսին նայում:

Անմեղ ժպիտը երեսին՝ կանգնած է փոքրիկ քոյրս... նա ինձ համար նախաճաշիկ է բերել՝ հաց, գինի, խորոված:

Անում է գինին ու տանում առուակի ջրում զովացնելու... իսկ ես ուրախ-ուրախ սկսում եմ քակել կապոցը:

Բայց... նոյն ժամին զարթնում եմ ու դիտում շուրջս:

Ներկան իր ողորմիկ դրութեամբ ցցում է առաջս:

Կանաչ խոտին փոխարինում է չոր յարդեայ մահիճը:

Չով ու կենսաբար զեփուռին՝ բանտի հեղձուցիչ օդը:

Ականջիս հտանում են քայլերի զգոյշ ձայներ:

Մտածում եմ՝ քոյրս է, գինին բերած կլինի:

Մակայն ինչ խարէութիւն:

Բանտապետն է, որ հսկում է խեղճ ու թշուառ բանտարկեալիս:

Այրօ

Թիֆլիս

ՊԱՅԲԱՐ

Նուէր Անդրանիկին

Պայթիւր, փոթորիկ, տրաքուէր, կայծակ,
Անդունդներ, բացէք լեռնացած ալիք...
Ահա գալիս է հեռուից մի նաւակ՝
Կեանքի պայքարը ձեռքին խաղալիք...

Դղրդաց ծովը... տարերքն ուժեղ
Անգոր նաւակին դարձրին խաղալիք...
Բայց նա չի սուզուում ջրերում անեղ,
Պայքար մղելով ճեղքում է ալիք...

Եւ չի խորտակուի նաւակը փոքրիկ՝
Խեղճ են նրա դէմ փրփուր ու ալիք...
Հեռուն բացում է այդ ազատութեան՝
Ահա կերևայ փարոս փրկութեան...

Բագու

Գաբրիէլ Փիտունի

Ա Ն Է Ծ Ք

Օրը մթնում էր...

Արևը վաղուց մտնեցել էր հորիզոնին և... մի քանի բոպէից յետոյ կընկնէր մօր գիրկը հանգիստ առնելու... Յոգնած էր արևը, յոգնած էր և ովկիանը... երկուսին էլ ընկճել էր դարերի բեռը... մանաւանդ ովկիանին, որը չկարողանալով տանել իր բեռը՝ ճկուել էր և... մէջքին երևում էր փոքրիկ սապատ անմատչելի մենաւոր կզգին:

Դարերից ի վեր կռիւ են մղել ովկիանոսի վիթխարի ալիքները այդ մենաւոր կզգու հետ, որը յանդգնութեամբ մտել էր նրանց ծոցը, լայց նա ապրում էր, ապրում հպարտութեամբ... ովկիանի անուիլի ալիքները անգոր էին նրան ընկճելու համար:

Երբ գորշ ամպերը ալիքների աչքերից թազցնում էին արևի կիզիչ շողերը, այն ժամանակ կատաղի ալիքները խօսք մէկ հղած, յուզմունքից փրփրած գալիս ուժգնօրէն խփում էին կզգու չոր կողերին ու... մոնչում... Սակայն իզուր... Կզգին ոչ թէ չէր ընկճուում, այլ նոյն իսկ բողբոջի ձայներ էին դուրս գալիս նրա բերանից:

Ալիքները, կարծես աւելի կատաղած այդ քար լուսթիւնից՝ յետ էին նահանջում, կցում իրանց հետ աւելի մեծ կոհակներ ու խմբովին յարձակում անյաղթ թշնամու վրայ, բայց ապարդիւն. յոգնած ու ջարդուած յետ-յետ էին նահանջում ու կորչում ովկիանի անհուն տարածութեան մէջ:

Երբեմն էլ մոլեգնոտ մօտ էին վաղում կզգուն՝ գրկում նրա անհամրոյր իրանը, մերթ էլ համբուրում թաց շրթունքներով՝ ու... հիասթափուած յետ-յետ փախչում:

Սակայն հինաւուրց կզգին անտարբեր էր շուրջը կատարուող կռուին. ոչ նրանց ուժգին հարուածները և ոչ էլ զգուանքն ու սիրալի համբոյրը չէին վրդովում նրան:

Հպարտ ու անմատչելի էր կզգին, ինչպէս և նրա մենաւոր բնակիչը... խոժոռ ու հպարտ:

Այդ մենաւոր վայրումն էր քարտուած Փրանսիայի Մեծ Զաւակը:

Մենակ էր նա... մտքերով տարուած, յուզուած, փրփրած, որպէս և ովկիանի անդնդախոր ալիքները:

Ահա յամր քայլերով մօտենում է նա կզգու ափին, այնտեղ, որտեղ դարերից ի վեր կռիւ են մղել ովկիանի անհաշտ ալիքները կզգու չոր ու անյաղթելի կողերի հետ:

Կռիւ, կռիւ:

Օ... այդ հարազատ էր նրա հոգուն. նա փայտայում, գուրգուրում էր այդ սուրբ անունը:

Կռիւ, կռիւ, չէ՞ որ կեանքը կռիւ էր... ապրել նշանակում է կռուել կեանքի հետ:

Նա հասաւ ավրը... տեսաւ թէ ինչպէս սառն ջրերը գրկում, լիզում էին իր մենարանի քարոտ ավերը:

Ձեռները խաչաձև դրած կրծքին՝ նա նայում էր հեռուն, շատ հեռուն՝ այնտեղ ուր արևն էր սուզուել ջրերի յետևում, ուր երկինքն ու երկիրը գաղանի համբուրում էին... Աչքերը դրանից էին կողմը չէին կարողանում տեսնել, իսկ հոգին սաւառնում, թռչում անցնում էր անհուն ովկիանոսի վրայից դէպի հայրենիք, դէպի կռիւ:

Վերջալոյսը վառում էր արևմուտքում իր բոլոր գոյներով:

Երկնակամարի վրայ լող տուող ամպերը տակաւին ժպտում էին մայր մանող արևի վերջին շողերից. բնութիւնը պատրաստում էր քնելու. գորշ խաւարը ծանրանում էր ովկիանոսի և կղզու վրայ:

— Ինչո՞ւ—դուրս թռաւ յանկարծ մինաւոր բնակչի կրծքից և ձեռները շարժուեցին օդի մէջ:

— Չո՞ւ, չո՞ւ... կրկնեց արձագանքը ու տանելով իրան հետ «չուն» հալուեց ովկիանոսի ջրերում:

— Հայրենիք... որդիս... կանչեց նորից նա, բազկատարած մի քայլ առաջ գնալով, կարծես ուզելով մէկին փարուել... սակայն, գորշ խաւարն զգալով միայն իր պրկում՝ նա յուսախաբ յետ քաշուեց, նստեց քարին, իսկ արտասուքի ցայտուն կաթիլները դուրս թռչելով նրա աչքերից՝ ընկան դէպի ովկիանը:

Արեւիկայից ովկիանը արցունքի կաթիլներից. ովկիանի մակերևոյթը այրուել էր այդ մի գոյգ արցունքի կաթիլներից. այն արցունքները, որոնք նրա աչքերում խորը թագնուած դուրս չէին ցայտում այն ժամանակ, երբ իր ոտքերի տակ տեսնում էր հազարաւոր անմեղ դիակներ ու... իսկ այժմ:

Արիքները լեռնացան իրանց օրօրացում, տարուբերուեցին այնտեղ ու հարուածեցին կղզուն. կղզին տնքաց:

— Անսիրտ, հազիւ արտասանեց կղզին, երբ վրայ հասաւ երկրորդ հարուածը՝ աւելի ուժգին, աւելի կատաղի:

Դեռ երբեք ովկիանը այնքան կատաղի չէր եղել, ինչպէս այսօր. և այդ զգում էր կղզին ու... հառաչում:

— Անէ՛ծք, անէ՛ծք. կանչում էին ալիքները ու հարուածում կղզու ժայռերին—հիմնայատակ անելու տննչով:

— Է՛ծք-է՛ծք... կրկնում էր արձագանքը ու մեռնում գիշերային մթութեան մէջ... կղզու բնակիչը մտախոհ ահանջ էր դնում այս բողբոխ:

— Այո՛, անէ՛ծք... անէ՛ծք... գոռաց նա, յանկարծ տեղից վեր թռչելով:

— Է՛ծք... կրկնեց արձագանքը:

Նա եղաւ տեղից ու հորից յամբ քայլերով անյայտացաւ գիշերային խաւարի մէջ «անէ՛ծք»-ը շարունակ կրկնելով...

Գորշ խաւարը գրկել էր աշխարհը, իսկ վերջալոյսը անյայտացել էլ մթութեան ծոցում:

Արշարունի

Նոր-Նախիջևան

Ք Ա Ր Տ Ա Շ Ը

(В. Брюсовъ-ից)

— Քարտանշ, այ քարտաշ, ճերմակ գոգնոցով,
Ի՞նչ ես դու շինում ես որք համար:
— Է՛յ, մի խանդարի, զբաղուած ենք գործով.
Մենք բանդ ենք շինում, շինում անդադար:

— Քարտանշ, այ քարտաշ, անվրէպ բահով,
Ո՞վ նրա միջին պիտ լայ վշտաբեկ:
Ո՛չ դու, ոչ այլ մարդ՝ քեզ պէս ապահով.
Դուք գողանալու ի՞նչ կարիք ունէք:

— Քարտանշ, այ քարտաշ, զիշեր ժամանակ
Ո՞վ մէջը անքուն պիտ տանջուի արդեօք:
— Գուցէ իմ որդին—ինձ պէս մի մշակ.
Լի է դըրանով մեր բախտն անողոք:

— Քարտանշ, այ քարտաշ, աղիւսներ կըրող
Մարդկանցը գուցէ՛ միտք կը բերէ՞ նա.

— Էյ, զգուշացիր, վերելակը թող.
Ողջն անձամբ գիտենք. լաւ է լուռ մնա:

Սիմ. Բաքիբան

Եալթա

ԻՄ ՎԱՐԴԸ

Մտքով տարուած պարտէզ մտայ
Այնտեղ վարդի մի թուփ տեսայ՝
Մօտեցայ...

Իրար կպած, նրա վրայ,
Երեք կոկոն վարդեր տեսայ՝
Գերուեցայ...

Գաղտնագողի մօտ գնացի,
Դողդոջ ձեռքով ան պոկեցի՝
Տխրեցի...

Կոկոն վարդը ինձնից խոով
Ծակեց մատս անխիղճ փշով՝
Անխոով...

Առի ես ան, կրծքիս արի
Ջարդը գողտրիկ ըսքանչելի՝
Տարուեցի—

Անոր անուշ բուրմունքի տակ
Խորունկ մտքով—անվերջ, անտակ—
Անապակ:

Աւող միայն մի ժամ ապրեց՝
Սիրուն վարդս ինձ հոտ տուեց՝
Ու մարեց...

Թողնեց, ընկաւ տխուր, տրտում
Ու վերք թողեց իմ հէզ սրտում
Անշիջում...

Դս. Տ.

Թովտի

Հ Ն Ա Դ Ա Ի Ա Ն Ը

(Պատմութեամբ)

I

Երեկոյ էր. արևը իր վերջին ճգնաժամումն էր գտնուում. նրա հրեղէն գնդի մի մասը արդէն ծածկուել էր հորիզոնի յեակը, իսկ մնացած մասով վերջին հրաժեշտի սղջոյնն էր տալիս կամաց-կամաց թմրող աշխարհին: Մութը գնալով խտանում էր՝ փոփոխելով իր խաւար թևերը տիեզերքի անծայր տարածութեան վրայ:

Պարոն Գուլոյեանը նստած տան պատշգամբին, սեղանի առաջ թէյ էր խմում, իսկ մէջ ընդ մէջ էլ հոլանդական հաստ սիգարը բերնին դնելով՝ ծխի թանձր քուլաներ արձակում օդի մէջ: Նրա դէմ ու դէմը նստած էր կինը, որ մի ցածրահասակ, նիհար ու դեղնած երեսով մի անձն էր: Նրա դէմքը, որի վրայ դեռ դրոշմուած էր անցեալի գեղեցկութիւնը՝ ծածկուել էր արդէն անժամանակ կնճիւններով. միայն աչքերն էին մնացել նախկին գեղեցկութիւնից, որոնք արտայայտում էին անչափ բարութիւն և հեղութիւն:

Նա կուչ էր եկել սեղանի մի անկիւնում՝ ստրկական դիրք բռնանած՝ յաճախակի անհանդիստ, վախկոտ հայեացքներ ձգելով ամուսնու վրայ, որն այդ ընդմիջին անձայն ներս էր քաշում թէյը: Նրա կարմիր, լիքը երեսը, դէպի աչքերը կիտուած յօնքերը, մշտական խոփոտ արտայայտութիւնը և խստաբարոյ դէմքը նոյն իսկ անձանութիւն յետ էին մղում և ահամայ նրա սրտում երկիւղ ծնեցնում: Երեսին նայելով կարելի էր գուշակել, թէ ներսը ինչ պէտք է լինէր: Նա իր կեանքովը, դատողութիւններովն ու գործերովը միշտ եղել էր և կար մի տգէտ և միևնոյն ժամանակ բռնակալ ոմն: Ամենից աւելի կոպիտ էր վարուում իր կնոջ հետ: Մի լաւ խօսք, մի քաղցր ժպիտ երբեք դուրս չէր եկել նրա շրթունքներից: Կնոջ փոքրիկ սխալն ու զանցառութիւնը զարթեցնում էին նրա գազանային հոգին, այնպէս որ գռեհիկ հայհոյանքներից յետոյ՝ սովորաբար իր գործը վերջացնում էր բռունցքի ու փայտի անխիղճ հարուածներով:

Խեղճ կինը համբերութեամբ տանում էր իր դաժան լուծը: Այսպէս էր սկսուել ամուսնանալուց երկու ամիս յետոյ, այնպէս էլ շատ բռնակալու էր. մինչև այժմ: Շատ անգամ կնոջ բարեկամները խոր

հուրդ էին տալիս նրան թողնել ամուսնուն ու հեռանալ, բայց բարի կինը միշտ էլ մերժում էր ասելով՝ «Ճակատագիրս է, պէտք է տանեմ»:

Պարոն Գուլոյեանը հին մարդ էր. նրա կարծիքով ամբողջ աշխարհը մազի թելից է կախուած և պատրաստ է ամեն ընդէ անդունդը գլորուելու: Հնաւանդ սովորութիւնների չքանալը և նոր գաղափարների երևան գալը նրա համար մի աստիճան էր, որով մարդկութիւնը կամաց-կամաց դնում էր դէպի իր անկումը— բռնում էր աշխարհիս կործանման ճանապարհը... Բնական էր, որ այսպիսի հայեացքի տէր մարդը կնոջ մասին էլ ունենար շատ յիմար ու յետամնաց գաղափար: Նրա կարծիքով կինը ստեղծուած էր միայն երեխայ ծնելու և մեծացնելու համար, դրանից դուրս նա ոչ մի իրաւունք չունէր՝ ոչ գործի մէջ մտնել, ոչ խորհուրդ տալ և ոչ էլ նոյն իսկ այդ ժարգու մօտ ծիծաղել... Մի խօսքով նա պէտք է մոռանար իր մարդ եղածը և դասուէր տան կահ-կարասիքի շարքը:

Մի-մի ժամանակ, երբ նրա ականջին էր դիպչում կանանց ներկայ շարժման լուրերը, գլուխը շարժելով ասում էր՝— Հը՛, կինն էլ մարդ է ուզում դառնալ, համ... այ քեզ օյին... հիմա, որ անասուններն էլ միւս կողմից գլուխ բարձրացնեն և իրաւունքներ պահանջեն՝ ի՞նչ կլինի մեր հալը:— Կին և մարդ,— կրկնում էր նա միշտ, ցոյց տալու համար, թէ որքան մեծ զանազանութիւն կար այդ երկու բառերի մէջ: Կանանց հարցից ոչ պակաս ատում էր նա և՛ ուսումը:

Նրա կարծիքով ուսումը մի թոյն էր. որ մտնելով մարդ արարածի սրտի մէջ՝ թունաւորում էր նրան, հիւժում, քայքայում, մեռցնում էր խիղճն ու հոգին, Աստուծոց հեռացնում և հոգին Սադայէլի բաժին դարձնում...

Ըստ Գուլոյեանի՝ մարդիկ պէտք է ապրէին նախահայր Ազամի և Եւայի նման, երբ ոչ դպրոց կար, ոչ ուսում, բայց նրանք ներկայից աւելի ուրախ ու երջանիկ կեանք էին վայելում... Իսկ այժմ... և իբրև պատասխան թքում էր գետնին, ի նշան անհուն արհամարհանքի որը կարծես խօսքերով դժուարանում էր արտայայտել:

Պէտք է ասել, որ Գուլոյեանը շատ «Աստուածապաշտ» մարդ էր օրը մի կամ երկու անգամ եկեղեցի գնալը նրա սրբազան պարտականութիւնն էր. իսկ եթէ պատահամբ չկարողանար եկեղեցի երթալ ամբողջ գիշերը նստում էր ու սաղմոս քաղում՝ ի նշան ապաշխարութեան: Չմոռանանք յիշել նոյնպէս, որ նա հոգեւորյա պապից սովոր

էր մի քիչ կարդալ և հազիւ կարողանում էր գրել իր անուն—ազգանունը. այդքանից էլ շատ գոհ էր, թէ չէ աւելին իրան պիտի փնտսէր ու հոգին Սաղայէլի բաժին դարձնէր...

II

Գալօյեանի ընտանիքը կազմուած էր՝ իրանից, կնոջից և մինուճար որդուց: Բժիշկիների հետադատութիւնը ցոյց էր տուել, որ կինը անդադար ծեծ ուտելուց՝ անընդունակ էր դարձել որդեծնութեան: Բայց, իհարկէ, Գուլօյեանը ամենևին չէր ուզում հաշտուել այդ մըտքի հետ՝ վերագրելով այն նախախնամութեան կամքին:

Բայց ամբողջ տրագիդիան հէնց նրանումն էր, որ չնայելով Գուլօյեանի այդքան ուսումնաստեաց մարդ լինելուն՝ նրա մինուճար որդին բարձրագոյն կուսերում ուսանող էր:

Այդ ինչպէս էր եղել.—

Երբ որդին դառնում է 8—9 տարեկան՝ տանը պահել անկարելի է լինում. բոլորը իրանց որդոցը տալիս էին դպրոց. պ. Գուլօյեանը խիստ ինքնասէր ու պատուազգաց մարդ էր. տղին դպրոց չտալ՝ նշանակում էր միւսներինց յետ մնալ ու պատիւը ցած գցել միւս մարդանց առաջ... Հարստութեան կողմից, փառք Աստուծոյ, շատ լաւ էր: Լայնածաւալ կալուածքներից մեծ և կամուտ էր ստանում. հիմա այդպիսի մի չնչին բանի համար, որպիսին էր որդուն դպրոց տալը, կարժէր ինքն իրան գցել մարդկանց առաջ... Եւ այսպէս միւսներին հետ նա էլ տուեց որդուն դպրոց:

Մի երկու տարի սովորելուց յետոյ, պ. Գուլօյեանը, ի նկատի առնելով, որ որդին «պէտքին չափ» սովորել է՝ ուզեց նրան ուսումնարանից առնել: Բայց որդին չուզեցնալով բաժանուել իր ընկեր—աշակերտներից՝ սկսեց լալ ու աղաչել, որ հայրը այդ քայլը չանի:

Խեղճ մայրը որդու համար մի քանի անգամ ծեծ ուտելուց յետոյ՝ լռեց:

Երեխայի հարցը արդէն որոշուած կարելի էր համարել, եթէ մօր պզգականները մէջ չմտնէին—չխնդրէին և մասամբ էլ չամօթէին Գուլօյեանին՝ արած քայլի համար:

Երկար տատանումից յետոյ նա յօժարուեց թողնել որդուն դպրոցում:

Անցան տարիներ: Գուլօյեանի որդին աւարտեց դպրոցը. նա արդէն մի խիլահաս պատանի էր դարձել և այլևս պէտք չէր դրում

հօր խրատներով առաջնորդուել. նա սկսեց ճանաչել հօրը և նրա նախապաշարունակներով լի խօսքերը ատելով ատում էր:

Դպրոցը աւարտելուց յետոյ՝ նա մտքում դրել էր անպատճառ շարունակել ուսումը—գնալ բարձրագոյն կրթութիւն ստանալու, բայց հօր բնաւորութեանը լաւ տեղեակ լինելով՝ վախենում էր յայտնի իր մտադրութիւնը նրան:

Երկար տանջուելուց յետոյ, վերջապէս, յայտնեց իր մտադրութիւնը հօրը:

Վերջինս կատաղեց և պահանջեց, որ որդին անպայման հնազանդի իրան: Մեղմարար խօսել, համոզել նա չէր սիրում և չէր էլ ընդունում. նրա կարծիքով որդին հօր կամքին հակառակ գնալու իրաւունք չունէր, թէկուզ իր ասածը շատ էլ սխալ բան լինէր:

Բայց որդին անյողդողդէ էր. նա վճռել էր գնալ, թէկուզ հայրը սպանել էլ սպառնար:

Երբ հայրը տեսաւ, որ որդին իր որոշման մէջ հաստատ է և որ նրա վրայ չի աղոթւմ ոչ նրա սպառնալիքները և ոչ պահանջը՝ աւելի կատաղեց և հաստատ ու վճռական ձայնով ասաց.—

— Գնում ես—գնան, միայն օգնիլ ապրիր...

Էլ ուրիշ ոչ մի բան... ապա շուտ տուեց երեսը, ցասկոտ քայլերով ուղղուեց դէպի դուռը ու դուրս եկաւ:

Որդին հասկացաւ նրա խօսքերի նշանակութիւնը. այլ և յիշեց, որ հայրը այն անսիրտներից է, որ ասածը անպատճառ կը կատարի: Նա քիչ այլայլուեց, կարծես վախեցաւ արած յանդուգն քայլից, սպա սրտապնդուելով՝ յիշեց այն միջոցները, որ առհասարակ գործադրում էին աղքատ ուսանողները—իրանց օրական ապրուստը ճարելու համար:

Եւ այսպէս, ոչինչ համարելով ամեն մի խոչընդոտ՝ գնաց մեծ քաղաքներից մէկում ուսումը շարունակելու:

Այն օրից անցել էր ուղիղ մի տարի, բայց դեռ տնեցիք ոչ մի լուր չունէին նրա մասին: Որդին իր լուրթեամբ կարծես ուզում էր վրէժ առնել անխիղճ հօրից:

Սկզբում տեղական ընկերութիւններից մէկը տուել էր նրան ուսման թոշակը և յատկացրել էր մի համեստ օժանդակութիւն ապրելու համար, սակայն վերջը իմանալով հօր հարստութեան մասին— «ստախօս, խաբեբայ» մականուն կնքելով—մերժել էր իսպառ: Դրանից յետոյ նրա համար սկսուեց տանջալից կեանքը. բնակարանի,

սնունդի և այլ ծախքերի համար փող ճարելու համար նա ստիպուած էր օրերով ման գալ փողոցներում ու գրքեր կամ լրագիրներ ծախել, որի մնացած չնչին գումարով պահում էր իր զուլսը:

Սակայն աննորմալ կեանքը ազդեց նրա վատառողջ մարմնի վերայ. մի ատրի չարքաշ կեանք վարելուց յետոյ՝ նա հալուել ու մաշուել էր, վառվառն ու կրակոտ աչքերի բոցը արդէն մարել, դէմքը դեղնել ու ոսկրացել, իսկ մէջքը՝ անծայր վշտից ու չարքաշ կեանքից՝ կորացել: Անողորմ կեանքը կարծես չէր զլացել անժամանակ մատնելու նրան ծերութեան դիրկը:

Այդ զրութեան մէջ այլևս չէր կարող մնալ, մտածում էր մի հնար գտնել...

III

Հոկտեմբեր ամսի պարզ երեկոներից մէկն էր, երբ, ինչպէս ասացինք, պ. Գուլոյեանը նստած պատշգամբին թէյ էր խմում: Արևն արդէն մտել էր իր գիշերային ապաստարանը և նրան փոխարինել էր պայծառ լուսինը, որ հանդարտ, խաղաղ երեկոյին մի առանձին փայլ ու հրապոյր էր տալիս:

Գուլոյեանը վերջին բաժակ թէյն էր խմել և այն է պատրաստուում էր նորից ծխատուփը հանել՝ երբ հնչեց դռան դանդակը: Կինը շտապով վազեց, դուռը բաց արաւ: Ներս մտաւ մի անծանօթ մարդ, բարևեց և մօտենալով տանտիրոջ, յանձնեց մի ծրար, ապա, առանց մի խօսք ասելու, դուրս գնաց:

Էլ ժամանակ չունեցան հարցնելու, թէ ով էր կամ որտեղից էր: Կինը բնագրաբար յարձակուեց դէպի նամակը, բայց ամուսնու խոժոռ ու սպառնալից հայեացքը յետ կանգնեցրեց նրան. դողալով ու արտասուալից աչքերով մի կողմ բաշուեց ու երկչոտ հայեացքով սկսեց անթարթ նայել դէպի ամուսինը, որը արդէն բաց արած ծրարը կարճ դում էր ճրագի աղօտ լոյսի տակ:

Որքան կարդում էր նամակը, այնքան էլ Գուլոյեանի երեսի արտայայտութիւնը փոխուում էր ու դէմքը այլայլուում... Եւ ահա աչքերը փայլեցին, երեսը կարմրեց, շրթունքները ծովուկեցին, բռունցքը սեղմած կանգնեց ու անընակաճ ձայնով գոչեց.— Փո՛ղ... փո՛ղ... փո՛ղ... փո՛ղ... հո՛րդ անպատուեցիր՝ զնացիր... այժմ փո՛ղ ևս ուզում...

Կինը ամեն բան իմացաւ, բայց ձայն հանել չէր համարձակուում թէ չէ մեծ բաժինը իրան կհասնէր...

Տանջւում ես... մեռնում ես, հա՛... դու այդ չգիտէիր, երբ լըրբարար խօսքս ոտնատակ տուիր ու գնացիր սատանայի գողը... Ո՞վ էի ես— ո՞վ էիր դու... Եւ մինչև հիմա էլ չես ուզում խոստովանել, որ արածդ յիմարութիւն էր... Լա՛ւ... ուրեմն այդպէս էլ ապրիր... Թող քո փայտացած ուսումը քեզ օգնի... դու փողի երես չես տեսնի...

Այս վերջին խօսքերի հետ նամակը մի քանի անգամ ծախեց, պատռեց ու տարաւ զցեց կրակը:

Կինը տեղից չէր շարժուում... նա իր աչքերին չէր ուզում հաւատալ... չէր կարող նոյն իսկ երևակայել, որ մի հայր կարող էր այդքան անխիղճ գտնուել դէպի իր հարազատ գաւակը... բայց երբ շուռ եկաւ, նայեց կրակին ու տեսաւ բոցավառուած նամակը— էլ չկարողացաւ զսպել ներսում կուտակուած արտասուքի հեղեղը՝ հեկեկալով վազեց մտաւ սինհակ և ամբողջ գիշեր անքուն ու թաց աչքերով անցկացրեց:

Անցաւ մի երկու շաբաթ. ստացուեց մի նամակ ևս, որով որդին աղաչում էր ուղարկել գոնէ ուսման վարձը, բայց հայրը շատ սառնասրտութեամբ այս էլ առաջին նամակի օրին հասցրեց:

Անցաւ մի ամիս:

Մի առաւօտ, երբ Գուլոյեանը կնոջ հետ սեղան նստած դարձեալ թէյ էր խմում՝ ներս մտաւ հեռագրաբերը և յանձնեց մի հեռագիր:

Կինը գունաթափուեց. մի անյայտ զգացմունք ներսից անդադար ասում էր, որ դա լաւ նշան չպէտք է լինէր:

Ամուսինն էլ այս անգամ կարծես շտապով յետ արաւ հեռագիրը և նրա աչքին ընկան հետեւեալ խօսքերը.— «Ձեր որդին ինքնասպանութիւն գործեց, եկէք»:

Բռնակալի ձեռները դողդողացին, շրթունքները ծովուկեցին և կարծես սիրտն էլ արդէն պատրաստ էր փուլ գալ՝ բայց կնոջ ներկայութիւնը խանգարեց: Այստեղ էլ նոյն իսկ չուզեց ցոյց տալ իր թուլութիւնը կին արարածի առաջ... և լացի փոխարէն դուրս թաւ նրա բերանից մի կծու հեղնանք...

Կինը ամեն ինչ մոռացած առաջ վազեց խելու հեռագիրը, բայց Գուլոյեանի ուժեղ ձեռները յետ մղեցին նրան...

- Տներ... շնջաց կինը էլի առաջ մղուելով:
- Մեռել է... սպանուել է... իբրև պատասխան հնչեցին նրա կանջին անխիղճ ամուսնու սառն խօսքերը:
- Մեռել է, ահ... գոչեց կինը ինքն իրան մոռանալով— անսիրտ

մարդ, մեռցրի՛ր... տո՛ւր... տո՛ւր նրան:

— Կանչում են մեզ թաղելու... էլի նոյն սառնասրտութեամբ խօսեց ամուսինը:

— Անգճւթ, աւազակ... մեռցրի՛ր... միակ դաւակիս... աղաւնեակիս... տո՛ւր տո՛ւր նրան—կանչում էր անզօր կինը՝ յարձակուելով անսիրտ ամուսնու վրայ, կարծես ուզում էր նրա ճիրաններից խլել, ազատել թշուառ դաւակին... նա մոռացած ինքն իրան յարձակուեց ամուսնու վրայ, բռնեց նրա կոկորդից ու սկսեց սեղմել...

Գուլօյեանի մէջ արթնացաւ գազանը... Մի ձեռքով բռնեց կնոջ երկայն մազերից, իսկ միւսը ուժգնութեամբ իջեցրեց նրա գլխին...

Կինը մի պտոյտ գործեց ու փռուեց գետնին...

Իսկ ինքը՝ պ. Գուլօյեանը՝ ուշք չդարձնելով ընկածի վրայ՝ շտապով առաւ վերարկուն ու գլխարկը և դուրս գնաց:

Նա գնաց հեռագրելու, որ որդու թաղումը կատարեն առանց ծնողների:

Թ. Ախայեան

ԱՆՅԱՅՏ ԶԳԱՑՈՒՄ

Չըզխտեմ՝ ինչո՞ւ լուսնակ գեղերին,
Երբ ես նստած եմ լուռ ծառի տակին,
Ապրում եմ մենակ իմ խոհերի հետ՝
Տխրում է սիրտս, հոգիս մռայլում.
Մի քար է կախում, կարծես, իմ կրծքում...
Ճնշում է ինձի անյայտ զգացում...

Միրում եմ մենակ անտառում նստել
Ու ականջ դնել աղմկող գետին,
Նախշուն հաւքերի աշխոյժ երգերին,
Աշնան տերևի լքուած սօսափին՝
Ուզում եմ տեսնել գալիք օրերս՝
Մոյ՛ն զգացումս է համակում հոգիս...

Երբ խնձոյքներում ուրախ ժպտով
Տեսնում եմ կանանց գեղանի դէմքով՝
Յուզում բնարի լացող լարերից՝
Թնդում է հոգիս, ուզում եմ հալուել,
Նիրհել յաւիտեան այդ ապրումներից՝
Զգում եմ նրան կախուած իմ սրտից...

Ուզում եմ սիրել, հոգիս նուիրել
Քնքոյ՜ սրտերին. շրթունքս հպել
Նազուկ շրթերին. և երջանկութեան
Թևերի վրայ հանգչել յաւիտեան—
Անհոգ ու անցաւ կապուած նրանց հետ...
Բայց նա ասում է՝ «Կորար դու անհետ»...

Յ. Ալ.

Ստաւրոպոլ

ՉԻՆՈՒՈՐԻ ՄԱՅՐԸ

(Պատկեր Սասունցոց կեանքից)

Տուրուբերան նահանգի ըմբոստ Սասունը մահուան տագնապի մէջ էր: Երկու ուժեղներ—մահն ու կեանքը բռնուել էին իրար հետ: Թէ որ կողմն պիտի յաղթանակէր զուլումի արիւնոտ երկրում, Սասունի քաջարի զաւակները վաթանում, ուր մարդիկ պատուով մեռնել գիտեն, ոչ ոքի յայտնի չէր: Գիւտուրնի արեան ծարաւի բռնակալ Տաճկաստանի ճոճացող գահի պաշտպանները՝ իրանց անյաջողութիւնների պատճառ հայերին համարելով, իրանց ամբողջ ճիգն ու ջանքը ուղղել էին արծիւների բոյն Սասունին՝ հայի կիսանկախութեան բեկորներին: Լեռնոտ աշխարհի խորհրդաւոր լռութեան մէջ, զլուխը խրոխտաբար բարձրացրած Սիմ սարը իր չորս կողմն էր նայում: Այնտեղ, հեռուն, կապոյտ եթերի միջից բացուում էին Մշոյ դաշտի գմայելի տեսարանը—նրա նկարչական գիւղերն ու վանքերը, հայի պաշտած Մշոյ Աստուծան Ս. Կարապետով, Ներքովթ և Գրգուռ լեռներով, որոնց հովանու տակ պահուած է Վանայ ծովը, արիւնսաներկ Վասպուրականով, մորթոտուած զաւակներով, ծխացող գիւղերով: Անտոք, Կամք, Սասուն, Տուրուզ այն կողմն են նայում, դէպի Վան, դէպի հայ գիւղակիցները, օգնութիւն, օգնութիւն հայցում միայն գէնքով: Նրանք իրանք պաշտպանուել գիտեն: Բայց աւաղ, խորտակուած յոյսեր, խաբուսիկ երազներ...

Ոտքի ելած Սասունը օրհասական կռիւ է մղում նրա դէմ, որ կամենում է ճորտի շղթաները անցկացնել նրա ուժեղ բազուկներին: Տալուրիկ, Շատախ, Խուլը, Խիան... բոլորը զինուած, բոլորը պատրաստուած: Ահուկ լեռների կատարներում սաւառնող արծիւների նման՝ սասունցին վճռել էր թանկ ծախել իր կեանքը, մեռնել իր բնի վրայ, քաղուկներին պաշտպանելով:

Տ-կ գիւղը իրարանցման մէջ էր: Ձէնք են առել բոլորը, բացի հաշմանդամ ծերունիներից և պառաւ կանանցից: Ամենքը զգում են, որ դա սովորական տաճկական արշաւանքներից չէ, որին սասունցին սովորել է դիմադրել:

Հաջի Զարգարի երկու որդիքն էլ պատրաստում են իրանց ղէնթերը, քթերի տակ մի ինչ որ ազգական հրդ ասելով: Մհերի և

Սերովբի մանկութեան ընկեր—մշակ Խաչանը գնալու չէ ազգի, տաճկի գլուխ ջարդելու, ինչպէս ինքն է ասում, նրան յանձնուած է տունը, Հաջի Զարգարի նահապետական օջախի պաշտպանութիւնը: Քանի հրաժեշտի խորհրդաւոր օրերը մօտենում էին, Հաջի Զարգարը այնքան յուզուում էր: Հեշտ էր ասելը. նա ուղարկում էր իր երկու արծիւներին, որոնց, իր մարդու հղերական մահից յետոյ, պահել խնամել էր աչքի լոյսի նման: Մի ինչ որ ներքին ձայն ասում էր, որ նա այլև տեսնելու չէ նրանց, առանց որոնց ապրել չէր կարող: Աննաման քաջերն վերջին անգամն էին հանգստանում իրանց հայրենական տան անկողինների մէջ, և ամբողջ գիշերը առանց դարթելու պառկել էին, կարծես թէ միւս օրը սովորական աշխատանքի պիտի դուրս գային:

Անքուն էր միայն Հաջի Զարգարը: Նա մինչև անգամ հալաւը հանած չէր. անհամբերութեամբ սպասում էր լոյսի բացուելուն, որ շուտ կարողանայ տեսնել նրանց ու շարունակ նայել ու նայել...

Մայրսեան առաւօտուայ արեգակի շառաւիղները ոսկեզօծել էին արդէն Տ—կ գիւղի շինութիւնները և մերձակայ անդնդախոր ձորերն ու բլուրները:

Թոււմ էր, թէ բնութիւնը անտեղեակ էր այն ամենին, ինչ որ կատարում էր գաղան դարձած մարդ արարածը:

— Այս ինչպէ՞ս բան է, Տէր Աստուած—մտածում էր Հաջի Զարգարը, աշխարհը այսչափ մեծ է, գեղեցիկ, ամենքը կարող են ապրել, առանց միմեանց վնասելու, զրկելու, բայց չէ, պիտի խեղդեն միմեանց. մէկին շատ, միւսին ոչինչ... տաճիկը, որ սպանում է—այդ գիտենք—նա անհաւատ է, բայց քրիստոնեաներն էլ ինչո՞ւ միմեանց կմորթեն... Ա՛խ, իմ Մհերս ու Սերովբս... այսօր նրանք ճամբորդ են... ձեր գնացած ճանապարհին դուրբան լինի Հաջի Զարգարը:

* * *

Նրանք այլևս չկային: Խաւարը պատել էր Հաջի Զարգարի սիրտը:

Օջախս մարեց, զաւակներս գնացին, թուան դէպի այն սարերը, ձորերը, որոնք այնքան մարդիկ են կլանել: Ի՞նչ պիտի անիմ ես այսչափ մալն ու մուլը. ո՞ւմ համար պիտի պահեմ, պաշտպանեմ: Չկայ Մհերը, չկայ Սերովբը: Եթէ վերադառնային:

Անիծեալ կասկածը կրծոտում էր նրա սիրտը. նա չէր հաւատում նրանց վերադարձին, մանաւանդ գիտէր, թէ ինչ կռուողներ են նրանք:

Անցան օրեր, ամիսներ... Հաջի Չարդարը ոչ մի լուր չստացաւ: Որքան էլ Սասունը կտրուած լինէր արտաքին աշխարհից, սակայն Ալաշկերտում, Մշոյում, Վանում տեղի ունեցած սարսափի լուրերը հասնում էին Մշոյ դաշտից դէպի Տալուրիկ—Սասնոյ բարձունքները, անձնազոհ լրաբերների շնորհիւ:

Թէև Մհերի և Սերովբի մահուան մասին ոչ մի տեղեկութիւն չկար, նոյն իսկ գիւղն էլ չգիտէր, բայց Հաջի Չարդարը համոզուած էր, որ նրանք չկան—զոհուել են իրանց սիրած Սասունին:

Գոռ կուռի ժամանակ, նրանք իբրև անվեհեր ռազմիկներ, ընկել էին կրճեքից վիրաւորուած, հանգիստ գտնելով այնպիսի մի ծմակում, ուր արևի ճառագայթներն անգամ երբեք թափանցած չէին:

Իր որդեկերանց կորստից յետոյ, Հաջի Չարդարը ամիսներով մարդկանց չէր երևում: Նա փակուել էր իր օդայում և ամեն բան յանձնել մշակ Սաչանին, որը կատարեալ տէր ու տիրական էր դարձել իր մանկութեան ընկերների մալ ու մուլքին:

Ամառը արդէն մօտենում էր իր վախճանին, տեղի տալով Սասնոյ մշուշային աշնանը: Դա Հաջի Չարդարի վերջին ամառն էր իր սիրուն օջախում: Նա վճռել էր թողնել տուն ու տեղ, հարստութիւն, վերցնել ճանապարհորդական ցուպը ու գնալ իր որդեկերանց թանկագին մարմինները գտնելու, նրանց վերջին անգամ համբուրելու—գրկելու, իսկ չգտնելու դէպքում—գնալ, գնալ ու անվերջ գնալ:

Տ—կ գիւղը արդէն մրափում էր՝ գիշերուայ մութ սաւանը իր վրայ քաշած, երբ Հաջի Չարդարը շտապ քայլերով պատում էր բակի մէջ: Գլուխը կորցրած մշակ Սաչանը, մեռելի գոյն ստացած, հետևում էր նրան, մինչև որ Հաջի Չարդարը ամուր բռնելով նրա ձեռքից, ներս քաշեց նրան ու դուռը փակեց:

Հաջի Չարդարը ամբողջ մարմնով դողում էր. չէր կարողանում յուզմունքից խօսել

— Խաչան, — վերջապէս ասաց նա յուզմունքը զսպելով, — գիտես, վաղը ես ճամբորդ եմ, պիտի գնամ, հեռանամ այստեղից... բոլորովին: Մհերը, Սերովբը այնտեղ են... ընկած են... ես այստեղ, տաք օդայում պիտի մնամ... ոչ, ես պէտք է նրանց գտնեմ, իմ ձեռքերովս նրանց... իսկ եթէ չգտայ՝ այն ժամանակ կերթամ ու կերթամ, առանց

յետ նայելու... առանց վերադառնալու... բոլորը քեզ կթողնեն... ինձ ոչինչ պէտք չէ. դու կլինես տէր-տիրական, մալ-մուլք, հող... Մհերի ու Սերովբի, ըս խաղընկերների մուլքը քեզ հալալ, նրանք քեզ եղբայր էին համարում, ես էլ որդի... դու գիտես, որք էիր, ես եմ քեզ մեծացրել... լսում ես Սաչան, դա իմ կտակ է, պատասխանիր:

Սաչանի սիրտն, ինչպէս հրաբղխային լեռու, վաղուց արդէն բորբոքում էր, նա շատ դժուարութեամբ էր ծածկում իր դարդը, իր սիրելի Մհերի և Սերովբի հեռանալուց յետոյ, բայց ոչ ոքի դիմաց չէր ուզում սիրտը բաց անել, նոյն իսկ Հաջի Չարդարի դիմաց, չուզենալով աւելացնել նրա ցաւերը:

Բայց այժմեան վճիռը տակն ու վրայ արեց նրա խոցուած սիրտը, համբերութեան բաժակը լրացնելով... խորունկ օդայի մի անկիւնում, սալայատակի վրայ փռուել էր Սաչանը: Նա թէև հանգստացել էր Չարդարի գուրգուրանքների ազդեցութեան տակ, բայց ցընցուցները շարունակում էին. ձեռքը, ոտքը, երեսը արեան մէջ թաթախուած էին պատերի կոշտ քարերին զարկելուց: Որքան էլ կեանքի փորձառութիւն ունէր Հաջի Չարդարը, որքան էլ շատ բան էր տեսել նա, սակայն չէր կարծում, որ իր վճիռը կարող էր այդ տեսակ սոսկալի ազդեցութիւն գործել Սաչանի վրայ:

— Հա, — նորից սկսեց յուզուել, գոռգոռալ Սաչանը, — դու ուզում ես գնալ, հեռանալ նրանց մօտ—Մհերի, Սերովբի մօտ, իսկ ինձ, պառաւ շան նման պահապան թողնել... չէ, ինձ պէտք չին նրանց մուլքերը... ես էլ կիրթամ Սասունի համար զոհուելու:

Բացէք, բացէք դռները... ես գնում եմ... չեմ կարող մնալ այստեղ... այստեղ պէտք է մեռնեմ... Վանդակում փակուած առիւծի նման Սաչանը մռնչում էր ու պատերին էր դիպչում, աշխատելով դուռը գտնել, դուրս պրծնել:

— Խաչան, դու չես ուզում Հաջի Չարդարի խնդիրը կատարել, վերջին խնդիրը... որովհետև չես սիրում նրան... դու խելագարի ես նման... Ամբողջ Տալուրիկին, Շատախին յայտնի Հաջի Չարդարը պիտի մերժուի, նրան ծուռ Չարդար պիտի ասեն... Մհերի, Սերովբի մօրը... ամօթ քեզ: Դու այսօր ընդունիր իմ խնդիրը, վաղը ինչ ուզում ես արա:

Վաղ առաւօտեան Հաջի Չարդարը արդէն պատրաստ էր: Նա ոչինչ չէր վերցրել հետը, բացի մի փոքր ճանապարհի պաշարից: Միայն ոտքից ցզլուխ հագնուել էր. կապել էր ոսկիները—բաջալու-

ները—ճակատին. հագել էր նոր հարս ժամանակուայ խաս շորերը, թաշեայ «Չուբբան», սիրած ամուսնու Պոլսից բերած նուէրները: Նա այդ չէր կարող թողնել իւր կեանքի սկիզբը ուզում էր կապել վերջին գլխի հետ. մանաւանդ այդ «Չուբբան» շատ էին սիրում Մհերն ու Սերովբը և «հայրիկիս նուէրն է» ասելով միշտ նայում, փայփայում էին: Եթէ նրանք ողջ են, կամ ծանր վերաւոր ընկած գիրքերում, կամ թագնուած գիւղում՝ պիտի ուրախանան ինձ այս հագուստի մէջ տեսնելով, մտածում էր Հաջի Չարդարը:

Նախ քան իր օջախին հրաժեշտ տալը, Հաջի Չարդարը պատեց տան բոլոր անկիւնները. մտաւ գոմը, մարագը, հաւանոցը:

Դժուար էր բաժանուել նրան այս բոլորից, որոնց հետ տասնեակ տարիներից ի վեր կապուած էր քաղցր, թանկագին երիտասարդական յիշողութիւններով:

Իւրաքանչիւր չնչին իր, քար ու քոյ յիշեցնում էին նրան բաղդաւոր ու անդառնալի անցեալը—երկիւաներին ու ամուսնուն:

Արդէն ժամանակ էր գնալու, բայց նա ուրը-մոլոր քայլերով պտտւում էր իր սիրած տեղերում, կարծես չէր վճռում ոտքը դուրս դնել օջախի շէմքից ու ընդմիշտ բաժանուել:

Արեգակը արդէն թեւում էր դէպի արեւմուտք, երբ Հաջի Չարդարը գերմարդկային ճիգ թափելով՝ երեւուն քայլերով գնում էր գիւղից ոչ հեռու գտնուած գերեզմանոցը, իր ամուսնու հողաթումբին հրաժեշտ տալու:

Գիւղի վերջին բլրի ծայրին արձան կտրած կանգնած էր Խաչանը:

Նա նայում էր դէպի Տաւրբիկի գիրքերը, որի ճամբան բռնել էր Հաջի Չարդարը և առանց յետ նայելու գնում էր, հն գնում:

Թոստով դ-՛ւ,

Ստեփանոս քահ. Պապայեան

ՄԵՌՆՈՒՄ ԵՆ, ՄԵՌՆՈՒՄ...

Մեռնում են, մեռնում կրակոտ յոյսեր,
Թաղւում են, կորչում թովոտն մտքեր,
Եթերն է նրանց կլանում անյագ
Ու հոգիս դարձնում դադարի աւերակ...

Թռչում են, կորչում իմ երազ օրեր,
Կորչում են անհետ քաղցրութեան ժամեր,
Եթերն է նրանց կլանում անյագ
Ու ոտքիս դարձնում վշտոտ աւերակ...

Ցնւում են, ցնւում իմ սիրոյ երգեր,
Մարում են, անցնում հոգուս անուրջներ,
Եթերն է նրանց կլանում անյագ
Ու հոգիս դարձնում անտէր, աւերակ:

Փայլում են, փայլում, ոհ, ազօտ լոյսեր,
Իմ մարած հոգին նորից անհանգիստ
Թռչում է դէպի լոյսն ու եթեր
Ու ցրւում անհետ յուսահատ մտքեր:

ԴՄ, Տ.

Նոր-Նախիջևան

* * *

— Չափ, չափ... կատաղի զարնում է ժայռին
 Ծովը վրդոված թափոփն ուժգին.
 — Չափ, չափ... «արձակիր, արձակիր շուտ ինձ»
 Գոռում է ծովը յատակի խորքից...

Ծեր ժայռն է տրտում. ծովն է սոսկալի
 Աղմկում, վշտում՝ քենն աչքերում լի.
 — Չափ, չափ... վրդոված, ժայռերն են տնքում
 Չարկիցն ահաւոր ծովի ակերում...

— Օ՛, դու էլ ինձ պէս չես կարող տանել
 Կոյր ստրկութիւն. ակերդ ասել
 Նեղ են քեզ համար. ասա, ասա, ծով,
 Տենչում ես դուն էլ բունն կարօտով»...

— Չափ, չափ... կատաղի զարնում է միայն
 Ափի ժայռերին. չկայ պատասխան,
 — Չափ, չափ... միալար նրա զարկերում
 Կայ ինձ պատասխան մթին ու թաքուն:

Արշարունի

Նոր-Նախիջևան

ՏԵՐԵԻՆԿԵՑԻ ՔԱՄԵՐ

Աշունը ոսկուց թախծի քառսում
 Մեր սիրոյ համար պըսակ է հիւսում.

Ե՛կ այստեղ ինձ մօտ սրտաբաց, պայծառ,
 Քո գովքն են երգում հով, աղբիւր ու ծառ:

Օրը մըտախոհ ու դանդաղ մեռաւ,
 Մէզը իմ հոգին իր մութ գոգն առաւ.

Սաղարթն է խշշում մեղմ ու ցաւալի.
 Ո՞վ քեզ կը սիրէ ինձնից աւելի...

Եթէ սիրոյ հուր դեռ կայ իմ սրտում,
 Գէթ այն առանց քեզ չըհանգչի տրտում:

Մենք սիրով արբենք, մեր սէրն օրօրենք,
 Մեր սէրը աշնան թախծով պարուրենք:

Կայ այն թախծի մէջ գերտնուրբ մի ոյժ,
 Մեզ համար մոգիչ, մեզ համար անոյշ:

Կեանքում չըստեանք բերկրանքի մի օր.
 Գուցէ թախծի մէջ լինենք բախտաւոր:

Յրտաթեւ, տըխտեր հոփն է շառաչում.
 Ա՛յն քեզ է փնտրում, ա՛յն քեզ է կանչում:

Աշունն էլ ոսկուց թախծի քառսում
 Մեր սիրոյ համար պըսակ է հիւսում:

Մուփրիոս Անուխան

Սիմֆերոպոլ

Ռ Ա Ջ Մ Ի Ք Ն Ա Ր Ը

(Գրական ակնարկ)

Համաշխարհային ահեղ պատերազմը սկսուած օրից, բնականաբար, արիւնահեղ ճակատամարտին մասնակցող երկրներին ու ազգերին գրականութիւնն ևս ահագին չափերով մասնակից եղաւ արիւնոտ անակնկալին ու արձագանքեց խոշոր չափերով հայրենիքի ապրումներին: Այլ կերպ կարող էլ չէր լինել, քանի որ գրականութիւնը, որքան էլ հին ու վիճելի լինի դա, «կեանքի հայելին» է իր ընդհանուր էութեամբ, քանի որ գրական այս կամ այն ճիւղի և այլազան տարբեր հոսանքի ներկայացուցիչները նոյն քաղաքացիներն են, նոյն ֆրանսացիներն, ռուսը կամ հայը, որ պէտք է ապրեն հայրենիքի ու ազգութեան ապրումներով:

Ճիշտ է, գրականութիւնը, գեղարուեստական ստեղծագործութիւնը ունի իր ուրոյն օրէնքները, որ կարող չեն ենթարկուել օրուայ հրատապ պահանջին, ունի իր որոշ կեանքը, որ համարեա միշտ անցեալն է վերապրում և կամ ներկայի հաստատ, արմատացած տիպերն ու հարցերն է քրքրում, պատկերացում:

Գրականութիւնը, բառիս նեղ իմաստով, ունի իր առանձին, իւրատեսակ ուղին, որ երբեք կարող չէ աօրեայի հետ ընթանալ և որի ներկան՝ այսօրուայ տագնապը կարող չէ լինել:

Այնուամենայնիւ, ազգային խոշոր ապրումները, ներկայ քաղաքական, հասարակական ու ժողովրդական այլ և այլ խոշոր ու նշանակալից դէպքերը կարող չեն անտես առնուել ազգային գրականութեան կողմից, չարտացոլուել այդ գրականութեան հայելու մէջ ու չստեղծել օրուայ ընթացիկ, հրատապ գրականութիւն:

Այլ հարց է, թէ որչափ արժէքաւոր ու մնայուն կարող է լինել այդ օրինակ «օրուայ գրականութիւնը»: Գեղարուեստական—ստեղծագործութեան գէթ ամենատարրական օրէնքների հետ քիչ ծանօթ անհատը կարող է, առանց կասկածի ու տարակուսանքի, հաստատօրէն պնդել, որ այդօրինակ գրականութիւնը կարող չէ լինել արժէքաւոր և մնայուն: Եւ, յիշուել, գրականութիւնների պատմութեան հաստ հատորների մէջ հազիւ թէ գտնենք մի արժէքաւոր ու մնայուն երկ, որ յօրինուած լինի օրուայ ապրումների, սինսացիոն դէպքերի անմիջական բովում:

Այնուամենայնիւ, այսպէս կոչուած օրուայ գրականութիւնը ունի, այնպայման, իր արդարացումը, եթէ ոչ գեղարուեստի խիստ պահանջների հանդէպ, թէկուզ ժամանակի անցողական բովում և ստեղծողի հոգեբանական պահանջների տեսակէտից, այլ և ընթերցող հասարակութեան հրամայողական պահանջի հանդէպ:

Երբ մեծանուն ռուս գրականագէտ, տաղանդաւոր ակադեմիկոս Իվան Բունինը բացարձակապէս բացասեց «պատերազմական գրականութեան» արժէքը ու պէտքութիւնը—նա իրաւացի էր մաքուր գեղարուեստի տեսակէտից, սակայն անգոր ժխտելու օրուայ գրականութեան անուրանալի *raison d'être* -ը:

Ժամանակին ես առիթ ունեցայ «Հորիզոն»-ում զետեղած մի շարք յօդուածներովս տալ ռուսաց գրականութեան պատերազմին արձագանքած երկերի մօտաւոր գումարն ու արժէքը: Այդ ցանկը ես դեռ առիթ կունենամ երկարելու, որովհետեւ ռուս ռազմական գրականութիւնը՝ չափազանց հարուստ է, եթէ ոչ որակով, գոնէ քանակով:

II.

Պատմական այնպիսի խոշոր ու վճռական դէպքեր, որպիսին այս արիւնահեղ պատերազմն է, կարող չեն աննկատելի անցնել ազգերի ու ժողովուրդների համար: Յիշենք մի ըողէ կատարուող արիւնոտ անակնկալի մեծ նշանակութիւնը, նրա յարուցած ազգային, անտեսական, քաղաքական ու հասարակական բազմատեսակ լուրջ ու ծանրակշիռ հարցերը, որպէսզի հասկանանք ապագայի կատարուելիք խոշոր պատմական էջերը:

Այսօրուայ աշխարհասասան պատերազմը կարող չէ ահազին յեղափոխութիւն առաջ չբերել շատ ազգերի կեանքում, ալ և այդ կեանքը արձանագրող գրականութեան էջերում: Ես աւելի բան հաւատացած եմ, որ պատերազմից յետոյ ահագին չափերով կը ծաղկեն ու կը բարգաւաճեն պատերազմին մասնակից ազգերի գրականութիւնները: Մասնաւորելով խօսքս հայերիս վրայ—աւելորդ եմ համարում հիմնաւորել ու բացատրել ապագայի վերաբերմամբ ունեցածս հաւատը:

Մի բազմաչարչար ազգ, մարտիրոս ազգ, որ մութ ու անձուկ անցեալից արիւնոտ ու ցաւոտ ներկայով դէպի լուսաւոր ապագան է ընթանում, մի ազգ, որ դարաւոր ժանտ ստրկութիւնից դէպի երկ-

ներանգ ազատն է գնում, մի ազգ, որ խուլ գերեզմանից արեան ծովերով, հերոսների դիակների վրայից ապագայ ազատ հայրենիքի դրախտն է վազում—կուրճից է այդ ազգը չունենալ հարուստ մի ապագայ և ազատ կացութեան հետ սկիզբ չդնել հարուստ ազգային կուլտուրային և նրա մեծագոյն զաւակ—գրականութեանը:

Սակայն, ապագան չէ յօդուածիս նիւթը, այլ արիւնոտ ներկան, ցաւոտ ու տանջալից երկունքի այս ծանր օրերը, ապագայ վառ արջ շալոյսին առաջնող ազամայ մութը:

Ի՞նչպէս և ի՞նչ չափով արձագանքեց այսօրուայ հայ գրականութիւնը արիւնոտ դէպքերին:

Այս հարցն է, որին պատասխանել գոնէ մօտաւորապէս պէտք է ջանամ ես:

Իհարկէ, անհնարին է ենթադրել անգամ, որ մեր գրականութիւնը կարող էր անտարբեր գտնուել ազգի ու հայրենիքի այս անաւոր, օրհասական օրերին: Ռափայէլ Պատկանեանի, Րաֆֆիի, Ծատուրեանի ու Ահարոնեանի գրականութիւնը, անշուշտ պէտք է ձայնակցէր ազգային այս մեծ պատմական օրերին: Այն օրից, երբ աֆերիստ էնվէրների ու երկդիմի Թալաթիների Թուրքիան շողկապեց իր ապագան գերմանական աշխարհակալ արիւնոտ տենչանքների ու զրահապատ բարբարոս բռունցքի հետ, այն օրից, երբ «Գերենն» ու «Բրեսլաուն» տմարդօրէն անաբեկ արին սև ծովիան ռուսական քաղաքների խաղաղ բնակիչներին—այն օրից վճռուեց «հիւանդ մարդու» մօտալուտ վախճանը և դժբախտ, բազմաչար Տաճկահայաստանի ոսկի վերածնունդը:

Բնական էր համայն հայութեան յախուռն ոգևորութիւնը, որ ռազմի հարազատ վայրերը գցեց տասնեակ հազարաւոր կամաւորներ, որ մի գերբնային ոյժով բացեց գոնէ մի քիչ հայ հարուստի փակ, միշտ փակ քսակը, որ հայ ուսանողներին քաշեց կովկաս ու Տաճկահայաստան:

Հայրենիքն էր կոնչում արիւնոտ անցեալից, արիւնոտ ներկայով դէպի անարիւն ու քաղցր ապագան շտապող յոգնած ու մաշուած հայրենիքը:

Կարճից էր այդ կոչին չարձագանքել նաև մեր գրականութիւնը:

III.

«Մեր խեղճ ու կրակ, մեր աղքատ գրականութիւնը»:

Ահա այն բնորոշումը, որ յաճախ, չափազանց յաճախ լսում էինք ու լսում ենք հայոց գրականութեան վերաբերմամբ մեր կարճատես, տնաբոյս «ինտելլիգենտներից», որ եւրոպական մի երկու համալսարանական քաղաքներում մանգալուց յետոյ՝ շտապում էին հայրենի վայրերը «մեր խեղճ ու կրակութիւնը» ողբալու:

Այդ պարոնների հետ վիճելու մտադրութիւնից հետո և՛մ այս րոպէին:

Պատկանեանի, Նալբանդեանի, Րաֆֆիի, Ծատուրեանի, Թումանեանի, Իսահակեանի, Ահարոնեանի, Շանթի, Շիրվանզադէի, Մեղեքեցի, Սուրբուկեանի, Տէրեանի և տասնեակ այլ խոշոր անունների գրականութիւնը «խեղճ ու կրակ» որակող պարոնները արժանի չեն պատասխանի:

Սակայն այս համոզմունքս ամենին չի արգելում ինձ պնդելու ու հաստատելու, որ վերջին տարիներս մեր ընթացիկ գրականութիւնը, յիւրաւի, աղքատ էր, չափազանց աղքատ նոր անուններով ու նոր երգերով:

Ի՞նչ տուեց մեր գեղարուեստական գրականութիւնը այս վերջին տարիներս:

Եթէ բանաստեղծական ստեղծագործական ասպարիզում մենք ու նեցանք էլ մի քանի՞աչքի ընկնող, քիչ շատ տաղանդաւոր անուններ՝ Արմենուհի Տիգրանեան, Լէյլի, Յ. Խանլարեան, Մազմանեան և էլի մի երկուսը, եթէ մեր հին ծանօթ հեղինակներից արժէքաւոր բաներ տուին Շանթ («Հին Աստուածներ»), Ա. Իսահակեան («Ակկորդներ»-ը), ապա պէտք է խոստովանենք, որ արձակ գրողներ, բեկիտրիստներ մենք համարեա չունեցանք:

Միայն վերջին տարիներս աչքի ընկան՝ Միք. Մանուէլեան իր գողարիկ պատմութիւններով, Ռէն, որի տաղանդը, ի դէպ ասած, չափազանց ֆիլիէտոնային բնոյթ է կրում, կարօտ է լուրջ մշակման, Սէյրի իւր գեղեցիկ մինիատիւրներով և, մասամբ, Մարգար իր միջակ արժողութեան պատմութիւններով:

Եւ ուրիշ. ուրիշ ոչինչ, որովհետև չի կարելի լուրջ գրական արժէք տալ Ս. Թորոսեանի «Քաջազուններ»-ին, «Պատանի»-ի շուրջը հաւաքուած տասնեակ սկսնակ գրողներին և մանաւանդ, մեր տխրահոգակ ֆուտուրիստ Կարա-Դարվիշին:

Աղքատ է, անշուշտ, մի գրականութիւն, որ տարիներ ընթաց-
քում տալիս է միայն մի «Հին Աստուած» և մի քանի բանաստեղ-
ծական ժողովածուներ:

Ահա այս դրութեան մէջ էր մեր ընթացիկ գրականութիւնը, երբ
պայթեց անուելի պատերազմը ու նրա արիւնոտ ծալքերից ծնուեց
Տաճկահայաստանի ազատագրման լուսաւոր հեռանկարը:

Չգարմանանք ուրիմն, որ այսօրուայ մեծ ու նշանակալից դէպ-
քերը համարեա չեն արձագանքած մեր գեղարուեստական գրականու-
թեան մէջ այն պարզ պատճառով, որ այդ գրականութիւնը, եթէ պա-
տերազմից առաջ մի կերպ երևում էր—պատերազմից յետոյ նրա
հետքն անգամ կորաւ: Յոյց տուէք հայերէն գեղարուեստական մի
մեծ ու արժէքաւոր երկ, որ լոյս տեսած լինի այս վերջին տարին,
աւելին կասեմ—ցոյց տուէք առհասարակ հայերէն մի վէպ, վիպակ
կամ պատմուածք, որ լոյս տեսած լինի պատերազմի մի տարուայ
ընթացքում: Այդպիսին չկայ, եթէ չհաշուենք պ. Յ. Լէրլէրիճեանի
(Արծիւ) գրչի փորձը: Հայ գրականութեան շուկան բացարձակապէս
դատարկ է:

Գրականութեան երկրորդ ապաստարանը պարբերական հրատա-
րակութիւններն են:

Դժբախտաբար, այդ պարբերական հրատարակութիւնները մեր
ցաւոտ կողմերից մէկն են կազմում: Արժէքաւոր ամսագիր կամ շա-
բաթաթերթ, որ կարողանային տեղ գտնել մեր գրական գործիչները,
մենք վաղուց չունենք: Երջանկայիշատակ «Մուրճ»-ից յետոյ մնաց
միայն Առաքելեանի ճապող «Արօր»-ը, որ Գրիգորեաններին միայն
կարող էր գրաւել: Գար. Լևոնեանի «Գեղարուեստ»-ը իր անկանոն
հրատարակութեամբ կարող չէր պակասը լրացնել: Ա. Ղազարեանի
«Նոր հոսանք»-ը եկաւ լեցնելու այդ ցաւալի բացը և, յիշուելի, մի
որոշ ժամանակ նա խաղաց աչքի ընկնող դեր, համախմբելով իր
շուքը մեր բոլոր սկանի գործիչներին: Աւանդ, հայ հրատարակչին բաշ
ծանօթ դեֆիցիտով առաջ գնացող այդ ամսագիրը պատերազմը
սկսուելուն պէս՝ դադարեց և մենք դարձեալ մնացինք առանց գրական
օրգանի:

Ընթացիկ ամբողջ ուսանայ գրականութիւնը պարփակուեց
«Հորիզոն»-ի պատկերազարդ յաւելուածների նեղ շրջանակում և, մա-
սամբ, «Գաղութ»-ի սուղ էջերում:

Գ. Լևոնեանի «Գեղարուեստ»-ը դեռ չի երևում, իսկ սկանակների
«Պատանի»-ն միայն այս վերջին օրերս կենդանութեան նշոյլ ցոյց տուեց:

«Հորիզոն»-ի պատկերազարդ յաւելուածն էլ դադարեց...
Խղճալի դրութիւն:

Գուցէ ինձ առարկեն՝ գրելու ժամանակ չէ, գործի ժամանակ է,
հայրենիքը վտանգի մէջ է:

Որպիսի սխալ հասկացողութիւն գրականութեան մասին:

Այսօր, աւելի քան երբ և իցէ, մենք կարօտ ենք ազգային գրա-
կանութեան, ազգային ստեղծագործութեան:

Գովելի է այն զգացմունքը, որ դէպի ռազմի դաշտ, դէպի տան-
ջուած հարազատներն է մղում մեր գրական գործիչներին. ուրախալի
է, որ այնտեղ են Թումանեան ու Շիրվանզադէ, Վալադեան ու Ռէն,
սակայն դա չի նշանակում, որ մեզ պէտք չէ գրականութիւն:

Բելգիայի մեծ երգիչ ալեգարդ Վերհարնը այսօր ողբերգում ու
օրհներգում է իր հայրենիքը («La Belgique sanglante»): Անատու
Յրանսի, Պիեր Լօտիի, Բոմին Բոլանի բուռն հայրենասիրութիւնը
չեն խանգարում ամենեկին Յրանսական գրականութեան ընթացքը:
Գաբրիէլ դ'Անունցիօն, կամաւորի զգեստներով, օրհներգում է Իտա-
լիայի կոիւր դարաւոր ոսոխի դէմ:

Լէօնիդ Անդրէս, ահա մի տարի է, կրակոտ հրապարակախօս է
դարձել. Մ. Գօրկիյ ու Ֆ. Սօլօգուբ հասարակական հրատապ հարցե-
րով են զբաղուած. Վ. Բրիւսով, Ալ. Տոլստոյ, Բոպլին, Կոնդուրուշ-
կին պատերազմական թղթակիցներ են այսօր, սակայն ուսաց գրա-
կանութիւնը շարունակում է իր ընթացքը:

Այն հանգամանքը, որ պատերազմը սկսած օրից մեր ընթացիկ
գրականութիւնը համարեա լիովին դադարեց իր գոյութիւնը—դա,
ըստ իս, վերին աստիճանի բացասական երևոյթ է, որ կարող չէ
արդարացում գտնել ազգի դժուար, օրհասական կացութեան մէջ:

Ցաւալի է մատնանշել մեր ազգային կուլտուրայի թուլութեան
այդ պարզ ապացոյցը:

IV.

Ինչպէս արդէն ստացի, պատերազմը սկսած օրից մինչև այսօր,
մենք զրկուած ենք լուրջ գրական օրգաններից և մեր սակաւաթիւ
գրական գործիչները ստիպուած են գետնից իրանց երկերը գլխաւո-
րապէս «Հորիզոն»-ի և, մասամբ, «Գաղութ»-ի սուղ էջերում:

Այդ թերթերը, բնականաբար, կարող չեն խոշոր տեղ տալ գե-
ղարուեստական գրականութեանը: Մի կարծ ժամանակ միայն բաւա-
կանաչափ առատ գրական նիւթ տուեց «Հորիզոն»-ի պատկերազարդ

յաւելուածը: Դժբախտաբար, խմբագրութիւնը մեծ տեղ տուեց մի շարք անարժէք ու օրուայ պահանջին և անգամ գեղարուեստի պահանջներին լիովին անհամապատասխան թարգմանութիւնների: Յաւելուածի ինքնուրոյն բաժինը համարեա զուրկ էր արձակ գրուածքներից, իբաց առած Ռէնի մի վիպակը («Գիւրեղմանափոր»-ը) և մի քանի պատմուածքներ:

Աչքի ընկնող տեղ էր բռնում բանաստեղծական բաժինը, ուր յաճախ երեան էին գալիս մեր հին ու նոր ականի բանաստեղծները:

Այդ չափածոյ գրականութիւնը, որի մեծ տոկոսը, ի ցաւ ասած, հեռու է լիովին արժէքաւոր լինելուց, մեծ մասամբ արձագանք էր կատարուող արիւնոտ ու նշանակալից դէպքերի: Եթէ այս մի քանի տասնեակ բանաստեղծութիւններին աւելացնենք «Գաղութ»-ում լոյս տեսած Սիմ. Բաբիեանի, Գագիկ Մխիթարեանի և մի քանի այլ հեղինակների երկերը—կատարուի այն ամենը, որ մինչ օրս տուել է պատերազմը հայ քնարին:

Յօդուածիս նեղ շրջանները թոյլ չեն տալիս ինձ մանրամասնօրէն կանգ առնել այդ «Ռազմի քնար»-ի վրայ և գնահատել այն ըստ արժանւոյն:

Բաւականանա՞նք մի քանի ակնարկներով:

«Հորիզոն»-ի մէջ աչքի ընկաւ իւր համակրելի տաղանդով սկսնակ բանաստեղծուհի Վարսենիկ Աղասեանը: Հեղինակը, դժբախտաբար, ազատ չէ մեր շատ ու շատ (նոյն իսկականի) բանաստեղծների ընդհանուր պակասութիւնից-տեխնիկայի կազալով: Ես քանիցս առիթ եմ ունեցել մատնանշել մեր բանաստեղծների այդ պակասութիւնը, որից զերծ չեն ոչ Տէրեան, ոչ Տիգրանեան:

Օրիորդ Աղասեանի այդ պակասութիւնը, բարեբախտաբար, մասամբ ծածկուած է բնական տաղանդով ու երգերի զգացմունքով: Աւելորդ չեմ համարում այստեղ մէջ բերել շնորհալի բանաստեղծուհու վերջին յօրինուածքներից մէկը, որ պատկանում է նրա քնարի յաջող ծնունդների թիւին և դետեղուած էր անցեալներս «Հորիզոն»-ում (№ 172):

Գ. Ա. Ղ. Թ. Ը

Շարան-շարան հկան կրկին

Կորաբամակ, դողիզոյ.

Միծաղ չըկայ նրանց դէմքին,

Ոչ էլ ժպիտ կրկնաշող...

Ջահիլ ու ծեր տխուր, տրտմում,

Արտասուում են լուռ լուին,

Նրանց շուրթեր վիշտ են պատմում՝

Անցւոր մարդի՛ն, աշխարհին...

Հարսը կորած հարն է փնտրում,

Մայրը՝ անսուղ զաւակին.

Արևներ են անխօս մարում,

Հեռուներում անմեկին...

Մերա է մաշում, հոգի տանջում

Այդ սև գաղթը արիւնոտ.

Է՛լ, հիմա ես չեմ ճանաչում՝

Ոչ սիրոյ կրգ, ոչ կարօտ...

Իհարկէ, այս գողտրիկ բանաստեղծութիւնը անգօր է տալ անսուր գաղթի մահասարսուռ պատկերը, սակայն չի կարելի ժխտել նրա դեղարուեստական արժանիքները:

Ուշագրութեան արժանի է նաև մեր ծանօթ, շնորհալի բանաստեղծ Սիմ. Բաբիեանի «Պատերազմը» շարքը, որ տպուեց «Գաղութ»-ում: Սիմ. Բաբիեանը, որ իր գրական գործունէութիւնը սկսեց իբրև բնութեան (մասնաւորապէս Ղրիմի բնութեան) քանքարաւոր երգիչ, վերջին տարիներս տուեց նաև մի շատ արժէքաւոր սիմվոլիկ, այլ և լիրիկական կտորներ: Լեզուի մաքրութեամբ և տեխնիկայի հարստութեամբ աչքի ընկնող տաղանդաւոր այդ բանաստեղծը, դժբախտաբար, թոյլ է քաղաքացիական մոտիւններում և այդ փաստը լիովին հաստատում է նաև վերոյիշածս շարքով: Դրանցից ամենայաջողը պէտք է հաշուել Բելգիային նուիրուած տողերը:

Ահեղ պատերազմի հովերով տարուած հայ բանաստեղծների յօրինուածքների մէջ փառաւոր ու առաջնակարգ տեղն է գրաւում, անշուշտ, Գառնիկ Քեալաշեանի այնչափ յաջող ու յափշտակիչ բանաստեղծութիւնը, որ անցեալներս տպուեց «Հորիզոն»-ում և որ ես անկարող եմ մէջ չբերել ամբողջովին:

ԹՇՆԱՄՈՒՆ.

Երբ ոսկրապատ մեր դաշտերով տուն յետ դառնաս յապեցած, գոհ,
Դու չեմ լսի կանչն այն անեղ.—«Կայէն, Ուր է հղբայրը քո».

Կամ արիւնոտ այդ ձեռքերով՝ փոքրիկներինդ երբ որ գրկես,—
Դո չէս յիշի խեղճ մայրերի հեծկլտանքները աղեկէզ...

Երբ գայ մի օր՝ և կատարենք այս խենթ շրջանն արիւնամած,
Եւ խելասթափ նորից կանգնես աշխարհի դէմ, մարդկանց դիմաց—

Սոսկուփների նախօրեակին քո համբոյրներն յուղայական
Եւ այսօրուայ վազըը մոլի վոհմակներին ստոր, վարձկան—

Եւ կռնակից տմարդ հարուած, յօշոտուփներ անմիտ, անգութ,
Հրդեհներ շարաւոյսներ, ծաղկած երկրի աւերակոյտ՝

Արիւնաշնչութ, դու կը մոռնաս, կը մոռանամ երբ գայ լաւ օր—
Եւ սրափլած մղձաւանջի՝ շնչենք ազատ ու բախտաւոր...

Քո սերմանած, քո ծաւալած—այսքան անկում, այսքան ցաւեր—
Դու կը մոռնաս, կը մոռանամ այս խենթ օրերն աշխարհաւեր...

...է՛հ, դո՛ւ մոռանաս,—մենք չենք մոռանայ,
Մենք չենք մոռանայ—և երկար, երկար...
Մենք չար ենք հիմա, դաժան, անխնայ
Եւ քո արիւնին—ծարմաւ խելագար:

Ո՞վ քեզ մեծարեց մեր երկիրը հիւր,
Ո՞վ էր աչք դրել քո կտոր հացին,
Մէկ էիք տալիս, ստանում հարիւր—
Եւ օձի նման սնուում մեր ծոցին:

Մեր երկիրը սուրբ, մեծ էր և անափ,
Եւ կարօտ չէինք հողի, աւարի.
Մենք ապրում էինք—երգով անտաքնապ,
Հնչուն, ծիծաղում ու ժպտում բարի:

Գրուած է վաղուց,—սիրեցէք միմեանց,
Եւ սիրում էինք, հաւատում անծայր—
Որ արեան օրերն անցել են անդարձ,
Եւ լաւ են մարդիկ, սրտները պայծառ:

Բայց դո՛ւ, թշնամի, նե՛ղ ու տմարդի՛,

Քանդեցիր մեր մէջ յոյսի մի տաճար,
Դո՛ւ մեզ քաշեցիր արիւնոտ մարտի—
Եւ մեր ոճիրին դու դարձար պատճառ:

—է՛հ, ի՛նչ մոռանանք—այդ չենք մոռանայ,
Եւ չար ենք արդէն՝ սիրով ու կամայ,
Եւ հարւածը մեր դաժան, անխնայ՝
Ընդունէ հիմա, ընդունէ հիմա:

Ո՞րպիսի ուժեղ գրիչ, որպիսի բուռն զգացմունք, պարփակուած
անչափ զեղարուեստօրէն յօրինած շրջանակի մէջ:

Գառնիկ Քեաւաշեանի այդ բանաստեղծութիւնը ոչ միայն այսօրուայ «Ռազմի քնար»-ի, այլև առհասարակ մեր քաղաքացիական քնարի խոշոր գարդերից մէկը կ'ընայ:

Յուսանք արդեօք, որ մեր «Ռազմի քնար»-ը ապագայում կը հարստանայ այդօրինակ տողերով և որ առհասարակ մեր գրականութիւնը կ'զարթնի իր լետարգիական քնից:

Այս մեծ պատմական օրերին, ազգային այս օրհասական ժամերին ոչ միայն հայ զինուորը, հայ բարերարը, հայ մտաւորականը, հայ հրապարակախօսը, հայ գործիչը, այլ և հայ գրողը պէտք է զգաստ ու պատրաստ կանգնած լինի իր տեղում սրբազան զէնքը—գրիչը ձեռքին:

Սիմ. Համալեան

Աք-Շէյխ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

№		Էրես
1.	Անբախտ Անտոն—Ալ. Աբելեան	3
2.	Պօէտին—Սիմ. Համալեան	12
3.	Լոեց Մեղեղին—Վարս. Աղասեան	13
4.	Յառաջ—Սիմ. Բաբիեան	14
5.	Աւաղ, ուշ էր...—Թ. Ախայեան	15
6.	Գաղթը—Գ. Մխիթարեան	21
7.	* * * —Արշարունի	22
8.	«Մյնտեղ»—Խ. Թ.	23
9.	Ալէկոծութիւն—Սիմ. Բաբիեան	26
10.	* * * —Յ. Ալ.	26
11.	Գինեմոլը—Գ. Մխիթարեան	27
12.	* * * —Ս. Համալեան	37
13.	Նայիր եղբայր—Խ. Տ.	37
14.	Մայրը—Արշ. Ազնաուրեան	39
15.	BERCENSE—Ս. Բաբիեան	42
16.	* * * —Ոն. Անոփեան	43
17.	Բանգարկեալի երազը—Սյրօ	44
18.	Պայքար—Ֆիտունի	46
19.	Անէճք—Արշարունի	47
20.	Քարտաշը—Բաբիեան	50
21.	Իմ վարդը—Տ. Խ.	51
22.	Հնադաւանը—Թ. Ախայեան	52
23.	Զինուորի Մայրը—Ստ. ք. Պապայեան	60
24.	Մեռնում են...—Խ. Տ.	65
25.	* * * —Արշարունի	66
26.	Տերերնկեցի ժամեր	67
27.	Ռազմի քնար	68

Շարունակում է 1916 թ. բաժանորդագրութիւնը

Երրորդ տարի

ԳԱՂՈՒԹ

Երրորդ տարի

Գրական, հասարակական և քաղաքական շաբաթաթերթի

— Պ Ա Տ Կ Ե Ր Ա Ձ Ա Ր Դ —

Բաժանորդագրինն է տարեկան 5 ռ., կէս տարուանը 2 ռ. 50
ամսական 50 կոպ., համարը 12 կոպ.:

Հասցէն՝ Нахичевань н-Д. редакция «ГАГУТЪ».

Շարունակում է 1916 թ. բաժանորդագրութիւնը

7 ըդ տարի

ՀՈՐԻԶՈՆ

7-րդ տարի

գրական, հասարակական օրաթերթի

տարեկան 10 ռ., 6 ամիսը 6 ռ., 3 ամիսը 3 ռ., 1 ամիսը 1 ռ.

Հասցէն՝ Тифлисъ ред. Оризонъ».

Լոյս ահսան և վաճառում են հետևեալ գրքոյկները՝
Խատիր—ի՝ «ԻՄ ՓԷՇԻԷՇՍ» (Ն-Նախ. բարբ., արդիւ
յատկացում է հոյ փախստականների օգտին դ. 20 կոպ
Խատիր—ի՝ «ՄԵՐ ՍԻՐԷԹՆԵՐԷՆ» (Նոր-Նախ
բարբ., օգուտը յատկաց. Թոփտի գիւղի չքաւոր աշակե
աշակերտուհիներին, գինն է 15 կոպ.:

Դիմել «Վրձին»-ի Հրատարակչին Нахичевань н-Д. пл.

Толстого № 5 Хачатуру Тирацуяну.

Շարունակում է 1916 թ. բաժանորդագրութիւնը

Երրորդ տարի

Ա Ր Ե Ն

Երրորդ տարի

Գրական, հասարակական և քաղաքական օրաթերթի

Հասցէն՝ Баку, редакция «Аревь».

4091

916.

H 3-195a

∞

Գինն է 40 Լ.

1
84 2

« Ազգային գրադարան



NL0375011

72.649

- 3-195a